№ 212 ՈՒՐԲԱԹ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28 1905 ՈՒՐԲԱԹ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28 № 212

ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.
Հեռ. հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Pour Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ազատ քաղաքացի. Հասել է ժամը. Վերջին տեղեկութիւններ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ազատ խօսք. Երազ թէ իրականութիւն. Ընթերցողի օրագիրը. Վերջին դէպքերը Թիֆլիսում. Թիֆլիսի մանկավարժների ժողովը. Դրութիւնը շուշում. Նամակներ Բագուից. Վլադիկավկազից. Գանձակից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԱԶԱՏ ՔԱՂԱՔԱՑԻ

—

Ազատ քաղաքացի ենք—ահա այն դիւթական խօսքը, որով կարող ենք մենք միմեանց հանդիպել և շնորհաւորութիւններ անել:

Եւրոպայում Ռուսաստանը բացառութիւն էր կազմում իր պետական սիստեմով: Այն ժամանակ, երբ Եւրոպայի բոլոր ազգերը վայելում էին ազգային ժողովի, սահմանադրական կարգերի, ազգի ընտրեալների ձեռքով առաջ տարվող պետական կեանքի բարիքներով,—միայն Ռուսաստանը մնում էր բացառութիւն: Եւ ընդարձակ Ռուսաստանի մէջ բազմամիլիօն ապրողները միայն հպատակներ էին, զուրկ իրաւունքից ազդելու պետական գործավարութեան և օրէնսդրութեան վրա:

Այսօր մենք քաղաքացիներ ենք, ազատ քաղաքացիներ: Մեզնից իւրաքանչիւրը կարող է իր մտաւոր և բարոյական կարողութիւններով մասնակցել ընդհանուր պետական կեանքին և իր ցանկացած թեկնածուներին ուղարկել դէպի այն խորհրդարանը, դէպի Դուման, որը պէտք է ղեկավարէ ամբողջ պետութեան կեանքը և օրէնքներ մշակէ ազգաբնակութեան համար:

Մենք ասացինք, որ Եւրոպայում բացառութիւն կազմում էր միայն Ռուսաստանը: Բայց մեզ կարող են առարկել, թէ դարձեալ կայ մի ուրիշ բացառութիւն և դա Թիւրքիան է: Բայց Թիւրքիան այնքան քիչ եւրոպական դրոշմ ունի իր վրա, ընդհանրապէս այնքան տարբեր է Եւրոպայի միւս պետութիւններից իր բոլոր հիմնական կարգերով և այնքան քիչ հողեր ունի այժմ Եւրոպայում, որ նա շատ անգամ Եւրոպայի պետութիւնների շարքի մէջ չէ համարվում:

Բայց և այնպէս, եթէ գցենք Թիւրքիան եւրոպական պետութիւնների շարքի մէջ, մենք կարող ենք սրտի խորին վշտով ընդգծել, որ Եւրոպայի ցամաքում դեռ մնացել է մի պետութիւն, որի մէջ ազգաբնակութիւնը չէ վայելում ազատ քաղաքացու իրաւունքները:

Իսկ մենք, որ վերջապէս վաստակել ենք նոր քաղաքացու դիրքը և կարող ենք ապրել իրաւակարգի ենթարկված սահմանադրական երկրում, ձեռք մեկնենք միմեանց իբրև քաղաքացիներ և աշխատենք ամբողջ պետութեան և նրա զանազան մասերի բարգաւաճութեան և զարգացման համար:

ՀԱՍԵԼ Է ԺԱՄԸ

—

Ո՞ւր ես դու հասարակութիւն, ո՞ւր ես դու ժողովրդական ինտելիգենցիա:

Մեզ հանդէս է կանչում պատմական րօպէն մտնելու ձեր իրաւունքների մէջ:

Հանդէս եկէք ձեր շինարար և գաղափարական գործունէութեամբ, գրաւեցէք ասպարէզը, որ ձեզ համար վերապահված է:

Այժմ, երբ դուք ազատված էք այն կաշկանդներից, որոնք դրված էին մարդկային շրթունքների վրա և այն ճնշումներից, որոնք ծանրացել էին ուղեղների և զգացմունքների վրա, առաջ եկէք բեղմնաւորելու և բարեշրջելու կեանքը, որ ճահճացել է խաւարի երկարատև տիրապետութեան օրերում:

Մինչև այժմ ստեղծում էին կաբինէտներում կանոններ ու հրահանգներ և ձեզ հրաւիրում յարմարվելու այդ կանոններին ու հրահանգներին: Իսկ այժմ դուք էք կեանքի տէրը, դուք ինքներդ պէտք է մշակէք կանոններ ու հրահանգներ ձեր կեանքի համար:

Ի հարկէ դժուար է և շատ լուրջ այն մեծ գործը, որ դրված է մեր բոլորի առաջ. բայց նա այնքան կարևոր է, այնքան կենսական, այնքան սրտագրաւ, որ մի րօպէ անգամ չը պէտք է վախենալ գործի մեծութիւնից և պէտք է ամեն ջանք, ամեն եռանդ առաջ մղելու ազգաշինութեան և հասարակական ստեղծագործութեան հոյակապ գործը կանոնաւոր կերպով իրականացնելու կեանքի մէջ:

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

«Новое Обозрѣніе» ամսիս 24-ին ստացել է Բագուից, սեփական թղթակցից հետևեալ հեռագիրը.

«Խուլիգանների խումբը յարձակվեց հայոց անկելանոցի վրա և հրդեհեց չորս տուն: Անկելանոցում սպանված են վեց կին և երեխայ: Ինքնապաշտպանութեան խումբը վճռական դիմադրութիւն ցոյց տուեց: Խուլիգանները տեղում թողին մօտ 30 սպանվածներ և վիրաւորվածներ: Դրութիւնը քաղաքում լարված է»:

—

Ստացանք հետևեալ հեռագիրը

Բագու, 25 հոկտ. գիշերվայ ժամը 10 և 35 ր.

«Քաղաքում անհանգիստ է: Հայրենասիրական մանիֆեստացիայի պատրուակով՝ խուլիգանները զօրքերի աչքի առաջ այրում են հայերի տները, կողոպտում են խանութները: Հակառակ Փոխարքայի արձակած հրամանի, ոչ մի միջոց ձեռք չէ առնված քաղաքը հանգստացնելու»:

—

Բագուից ստացած բազմաթիւ հեռագիրները, որոնք գտնվում են մեր տրամադրութեան տակ, ցոյց են տալիս, որ այնտեղ հաստատվել է խաղաղութիւն: Սակայն մտքերի յուզմունքը դեռ շարունակվում է, որովհետև հասարակութեան մէջ լուրեր են պտտում, որ կարող են նորից յարձակումներ տեղի ունենալ խուլիգանների և մի քանի զինուորականների կողմից:

Որքան էլ անհեթեթ երևան զինուորականների մասին յայտնված լուրերը, բայց նրանք յամառ կերպով պահպանվում են ազգաբնակութեան մէջ, որովհետև վերջին դէպքերի ժամանակ իսկապէս տեղի էին ունեցել մի քանի զինուորականների կողմից կասկածելի վարմունքներ:

Մենք յոյս ենք տածում, որ այդպիսի դէպքերը միայն բացառութիւն կարող էին լինել և որ զինուորական դասը բարձր պահելով իր պատիւը արատաւորող արարքները, միջոցներ կ'առնէ, որ այսուհետև ոչ մի նոր առիթ չը ներկայանայ վերագրելու զինուորական համազգեստին որ և է արատ, որ և է կասկածելի բան:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱԶԱՏ ԽՕՍՔ

—

«Մշակը», գործադուլից յետոյ, վերսկսեց իր հրատարակութիւնը բոլորովին նոր հանգամանքների մէջ: Մամուլին տուած է ազատութիւն: Այսուհետև այլ ևս չի լինի նախնական ցենզուրա:

Բայց կարո՞ղ ենք ասել թէ այսուհետև մենք ունենք տպագրական խօսքի ազատութիւն, հասկանալով այս ազատութիւնը այն մտքով, ինչպէս նա գործադրվում է արևմտեան աշխարհում:

Նախնական գրաքննութիւնը, այո, վերացված է: Բայց ցենզուրական կանոնադրութիւնը դեռ մնում է գործադրութեան մէջ, քանի որ նրան ոչնչացնող կամ փոխարինող օրէնսդրութիւն դեռ չէ հրատարակված:

Այն պայմանները, որոնց մէջ դրված է մամուլը այժմ, անկասկած այն չեն, ինչ էին մինչև այժմ: Մամուլի վրա ընկած ծանր լուծը անհամեմատ թեթևացել է այժմ: Բայց ներկայումս մենք դեռ մամուլի կատարեալ ազատութեան մէջ չենք գտնվում: Գոնէ դեռ չը կայ հաստատ ու պարզ օրէնք, որ կարողանար տալ մեզ ազատ խօսքի ապահովութիւնը, որոշէր մամուլի իրաւունքների և պատասխանատուութեան սահմանները:

Մեզ համար մամուլի կատարեալ ազատութեան նշան կը լինէր այն, եթէ հասարակական բոլոր խաւերը, բոլոր հոսանքները, բոլոր կազմակերպութիւնները հաւասար չափով ազատ խօսելու իրաւունք կունենան: Արդեօք կը լինի՞ այդ այժմ, երբ հին ցենզուրական կանոնադրութիւնը դեռ գործադրութեան մէջ է: Չը գիտենք: Մենք ապրում ենք մի վերին աստիճանի եռուն ժամանակում, երբ մեր ամբողջ երկիրը հրապարակ է հանել գործող կուսակցութիւններ, քաղաքական դաւանանքներ, գաղափարական պայքարներ: Արդեօք դրանք բոլորը պիտի կարողանա՞ն ազատ արտայայտութիւն գտնել մամուլի մէջ: Արդեօք ապահովված կը լինի՞ մտքերի ազատ փոխանակութիւնը այդ բոլոր հոսանքների մէջ և ամեն մէկը կարող կը լինի՞ ազատ պաշտպանել իրան մամուլի մէջ:

Հաստատ, որոշ ցուցմունքներ չը կան: Եւ մեզ, թէ մամուլի գործիչներիս և թէ մեր ընթերցողներին, մնում է, գոնէ առ այժմ, չը մոռանալ այս շատ կարևոր հանգամանքը: Մինչև հաստատ օրէնք հրատարակելը՝ գործնական կեանքը պիտի որոշէ թէ մինչև ուր են հասնում մամուլի ազատութեան սահմանները: Մամուլը այժմ պատասխանատու է դատարանի առաջ: Դատարանն էլ, առ այժմ, պիտի ցուցմունքներ տայ մամուլին: Թողնելով, որ ընթերցողը ինքը նկատէ, թէ որքան բարեփոխվում է մամուլի վիճակը այսուհետև, մենք հարկաւոր ենք համարում այս գլխից ուշադրութիւն հրաւիրել նոր կարգադրութեան առաջացրած այս անորոշութեան վրա: Սա կարևոր է մամուլի քայլերը հասկանալու համար:

Այսօր դեռ անորոշութեան մէջ ենք: Կունենա՞նք վաղը կատարելապէս ազատ խօսք:

Այս հարցի պատասխանը, կարծում ենք, շատ չի ուշանայ:

ԵՐԱ՞Զ ԹԷ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

—

Հայ մամուլը, հայ լրագիրը, «Մշակը» այսօրվանից լոյս է տեսնում ազատօրէն, առանց ցենզուրայի, առանց արգելքի:

Ինձ թւում է թէ սա երազ է. ինձ թւում է, թէ սա անուրջ է, որովհետև դեռ մի տարի չը կայ, որ հայ մամուլը և «Մշակը» դատապարտված էին ամենախիստ կապանքի և ոչ մի հնարաւորութիւն չունէին թոթովել նոյն իսկ երեխայի նման ազատօրէն, լիաբուռ թոքերով արտայայտել իրանց ցանկութիւնները, իրանց իղձերը, իրանց տենչանքը, իրանց հաւատամքը:

Այսօր մեզ գրողներիս, հրապարակախօսներիս համար բացվում է նոր, վարդագոյն արշալոյս. այսօր միայն մենք՝ հրապարակախօսներս դառնում ենք ազատ քաղաքացիներ. այսօր միայն մենք հնարաւորութիւն ենք ձեռք բերում անկեղծօրէն, անխարդախօրէն, ազատօրէն խօսել, քարոզել, ցանել, սերմանել և ապա քաղել մեր ազատ քարոզի, մեր անկեղծ, համոզված պրոպագանդայի քաղցր պտուղները:

Ողջունենք մեզ տրված ազատութիւնը. ողջունենք մամուլի և նրա հետ հայ բազմաչարչար մամուլի ազատութիւնը. աշխատենք լայն կերպով մշակել այսուհետև ազատ հայ մտաւոր անդաստանը:

Մամուլի ազատութիւնը այլ ևս երազ չէ. նա իրականութիւն է:

Հ. Ա.

ԸՆԹԵՐՑՈՂԻ ՕՐԱԳԻՐԸ

XXXVI

Ի՞նչ անենք:

Առաջին անգամը չէ, որ հայութեան առջև կանգնում է այս ծանր, օրհասական հարցը: Առաջին անգամը չէ, որ հայը իրան զգում է մենակ այս աշխարհում, բոլորովին մենակ, դատապարտված շրջապատի անհոգի, սառցային անտարբերութեան: Դաժան անարդարութիւնը առաջին անգամը չէ, որ սովորում է հայի անձի և գոյքի վրա արիւնով ու կրակով տօներ կատարել: Արիւնոտ բոցերը երկինք են հասել, կործանման շառաչիւնը սարեր ու ձորեր է լցրել—և դարձեալ ոչինչ, դարձեալ ոչ մի օգնութիւն: Երկրագնդի վրա կան մութ ու լուսաւոր ոյժեր, կան բռնապետութիւններ, կան հանրապետութիւններ, ազատամիտ, ռամկավարական կուսակցութիւններ, պահպանողական-խաւարամիտ մարդակերութիւն. կայ Եւրոպա, կան Ասիա ու Աֆրիկա: Եւ դրանցից ոչ մէկը մատը մատին չէ խփել հային դժոխքից հանելու համար...

Ի՞նչ անենք:

Նայել է հայը իր առջև բացված դժոխքին, կարծել է թէ դուրս գալ այդ դժոխքից չը պիտի կարողանայ, թէ եկել է վերջին րօպէն, երբ նա պիտի անհետանայ իր հողի երեսից:

Դարերով այսպէս: Միայն այսօր չէ, որ դաժան ճակատագիրը մեզ հարց է տալիս՝ «ի՞նչ անենք»: Եթէ միայն այսօր լինէր, մենք գուցէ և գլուխ կը կորցնէինք, չէինք իմանայ թէ ինչ պատասխանենք:

Երեք-չորս տարի առաջ Կովկասում տարածված էր այն միտքը, թէ հայերից պիտի մնան մի կամ մի քանի օրինակներ՝ ազգագրական թանգարաններում պահելու համար: Այն ժամանակ թաթարական շարժում չը կար, այն ժամանակ արիւն չէր թափվում մեր երկրում: Ռուս բիւրոկրատիան ինքնագոհութեան գագաթնակէտին հասած, տիրում էր անսահման, կարծում էր թէ որքան խեղդված, արնաքամ լինի հասարակութիւնը, այնքան անվրդով, այնքան հաստատուն կը լինի իր թագաւորութիւնը: Նա էր, որ խմբագրեց մի ամբողջ ազգ ոչնչացնելու այդ քաղաքավարի, գրական-գեղարուեստական տեսակէտից անդատապարտելի բանաձևը: Չէին ասում թէ հայութիւնը պէտք է սրի և կրակի մատնվի, աւերակների տակ անհետանայ: Ո՛չ: Մի հատ, երկու հատ հայ պահել թանգարանի համար—սա թէ այնքան սարսափելի չէ, թէ բաւականաչափ ուշադրութիւն է ցոյց տալիս դէպի գիտութիւնը, որ, ինչպէս յայտնի է, յայտնի չափով, այնքան, որքան կարող է ընդունել ոստիկանութիւնը, հովանաւորութեան էր արժանանում «հայրախնամ» բիւրոկրատիայի կողմից:

Բանաձևը խմբագրված էր ամեն մի երկմտութիւն բացասող պարզութեամբ: Նա գաղտնիք չէր կազմում, այլ ազատ-համարձակ զբօսնում էր հասարակութեան բոլոր խաւերի մէջ: Լըսում էր հայը իր մահվան դատավճիռը: Հին հայրենական հարցը՝ «ի՞նչ անենք» մի անգամ էլ կանգնեց նրա առջև: Մինչև այդ նա, ճիշտ որ, կանգնած էր թանգարանի զարդ դառնալու ճանապարհի վրա: Երկար ժամանակ նա հարուածներ չէր կերել և համարեա մոռացել էր իր պատմական ճակատագիրը: Բիւրոկրատիայի սրտաբաց անկեղծութիւնը բաց արաւ նրա աչքերը և նա տեսաւ իր առջև ընկած անդունդը, իսկ այդ անդունդի ծայրին—մի թանգարան, որ պատրաստ էր մի հատ մումիա պահելու իր մէջ, որպէս զի ցոյց տայ ապագայ դարերին թէ ինչպէս էր անդունդի մէջ թաղված հայ ժողովուրդը ազգագրական տեսակէտից:

Եւ նա, մահվան դատապարտվածը, ինքն

իրան ճանաչեց, ինքն իրան զգաց։ Հայրենական հին հարցը, «Ի՞նչ անենք»-ը երկար սերունդների հետևողականութեամբ սովորեցրել էր նրան, որ ուրիշ յոյս ու օգնութիւն չը կայ, ինչպէս երբէք չէ եղել, պէտք է պաշտպանվել։

Մեր պատմութիւնը պահել է իր էջերում հայի այդ զգացմունքի մի հրաշալի պատկերը։ Հինգերորդ դարում Վահան Մամիկոնեանը հերոսական դիմադրութիւն է ցոյց տալիս Պարսկաստանին։ Պարսից կառավարութիւնը կարծում է թէ գործ ունի հայերի քաղաքական ապստամբութեան հետ և պատերազմական գործողութիւններ է սկսում։ Երկար են տևում ընդհարումները։ Մօտ չորս տարի Վահան Մամիկոնեանը ցած չէ դնում զէնքը։ Եւ երբ, վերջապէս, պարսից կառավարութիւնը կամենում է խօսել իր հպատակների հետ, լսել նրանց, ի՞նչ է իմանում։ Այն, որ հայերը երբէք միտք էլ չեն ունեցել անջատվելու Պարսկաստանից, որ նրանք շարունակում են իրանց համարել պարսկահպատակ, հարկերից չեն փախչում, այլ միայն մարդկային իրաւունքներ են պահանջում, ոչ թէ նոր իրաւունքներ, այլ այնպիսիները, որոնք գոյութիւն են ունեցել վաղուց և օտարակեր քաղաքականութեան զոհ էին դարձել։ Հայերը պահանջում էին իրանց եկեղեցու իրաւունքները ոտնատակ չանել, չը խրախուսել հաւատափոխութիւնը, վատ ու անպիտան մարդկանց առաջ չը քաշել, երկրի իսկական տրամադրութիւնը և բուն հանգամանքները իմանալու համար այդպիսի մարդկանց չը դիմել, նրանց չը լսել ու չը հաւատալ. Թագաւորը անմիջապէս, առանց միջնորդների է գործ ունենում հայ ժողովրդի հետ. անձամբ քննում և իմանում է ամեն ինչ, ապա միայն դատաստան անում։

Ահա ինչ է ասում հայի ազգային հոգեբանութիւնը, որ մշակել է նրա պատմութիւնը հազարաւոր տարիների ընթացքում։ Այդ հոգեբանութիւնը չը հասկացողները այսօր հազար ու մի զրպարտութիւններ են դարսում հայերի վրա։ Բայց մեր ամբողջ անցեալը մի անհերքելի երաշխաւորութիւն է, որ հայի ձգտումը միշտ եղել է—ապրել մարդկային իրաւունքներով։

Այսօր ամեն մի հայ, կղզիացած, մենակ կանգնած զարհուրելի իրականութեան մէջ, հարց է տալիս, «Ի՞նչ անենք»։ Այդ հարցը նա միայն ինքն իրան պիտի տայ, լաւ իմանալով, որ վճռողը միայն ինքը պիտի լինի։ Եւ վճիռն էլ բարդ չէ, նա կազմված է մի բառից—ինքնապաշտպանութիւն։

Նկարագրել ինքնապաշտպանութեան բոլոր միջոցները աւելորդ է։ Ամեն մէկը լաւ հասկանում է թէ ինչ դասեր առեց 1905 թւի արիւնոտ տարին։

Ես երբէք չեմ մոռանայ եւրոպական մի ծաղրանկար, որ լոյս տեսաւ 1895—1896 թւականների հայկական կոտորածների ժամանակ։ Նկարված էր Սև ծովը։ Նրա ափին օսմանեան թուրքը բռնել է Հայաստանը ներկայացնող մի երիտասարդ, հերարձակ կնոջ կոկորդը, բարձրացրել է նրա վրա իր ահագին եաթաղանը։ Կինը սարսափահար ճչում է, իսկ նրանից երկու քայլ հեռու, ծովի ջրերից իրանց գլուխները դուրս են հանել եւրոպական զրահակիրները ներկայացնող կոկորդիլոսներ, որոնց աչքերից արտասուքի խոշոր կաթիլներ են թափվում։

Ճիշդ է, չէ՞։ Զարմանալի ճիշտ։ Կոկորդիլոսեան արտասունքներ և փայլուն եաթաղան զոհի կոկորդին դրած,—մի և նո՞յնը չէ։

Եւ ի՞նչ էինք մենք ամենքս ասում այդ խեղդող, յուսահատ իրականութեան առաջ։ Փրկութիւն չը կա՛յ—այդ էինք ասում։ Ո՛չ։ Հայը էլ ինքը պիտի իրան պաշտպանէ—ահա ինչ էինք ասում։ Եւ մենք ամենքս միաբերան քարոզում էինք. շինեցէք ձեր աւերակները, դրանց շուրջը գերեզմաններ փորեցէք անմեղ նահատակների համար, պաշտպանեցէք ձեր այդ ստացուածքները։ Ուրիշ ճար ճակատագիրը չէ տուել հային։

Այս մի և նոյն քարոզը կրկնվել է ամեն մի աղէտի ժամանակ թէ հին և թէ նոր ժամանակներում։

1876 թւականի վերջում թիւրքերը Վանում կրակեցին հայոց ամբողջ շուկան. մի գիշերվայ մէջ Վանի հայութիւնը կորցրեց իր ամբողջ բարեկեցութիւնը, ինչպէս այժմ Շուշին։ Եւ ահա հառաչանքի ձայների հետ խուլ լսվում է. «Ի՞նչ անենք»-ի հին պատասխանը։ Խրիմեան Հայրիկը իր «Վանգոյժի» մէջ ասում էր. «Ելէք, մի՛ նստիք և յուսահատ ողբաք այդ ապաժոյժ աւերակաց վերայ. ելէք, վանեցէք, դարձեալ առէք բահն ու բրիչ, հորդեցէք պեղեցէք ձեր աւերակները, դուք ձեզ համար ճարտարապետ եղէք, հիմը դրէք և շինեցէք ձեր աւերեալ տունն ու քաղաք»։

Սա էլ ինքնապաշտպանութիւն է, և նոյնքան մեծ ինքնապաշտպանութիւն, ինչպէս զէնքի և զրահի օգնութիւնը։ Ինքնապաշտպանութիւնը ոյժ է պահանջում։ Մեր աչքի առջև վերջացած սարսափելի պատերազմը ցոյց տուեց, թէ ոյժը միայն հրացաններն ու թնդանօթները չեն։ Երբ նիւթական ոյժը մոռացնել է տալիս, խեղդում է բարոյական—կուլտուրական ոյժը, ամենամեծ պետական կազմակերպութիւնն էլ անկարող է հանդիսանում։

Երկու ոյժերը պիտի միանան, միաբանվեն։ Այսպէս է եղել ամենքի համար, այս է մանաւանդ հայի ինքնապաշտպանութեան գաղտնիքը։ Թոյլ չը տալ, որ ձուերի պէս կոտորեն,—այդ ինքն ըստ ինքեան։ Բայց մենք երբէք չը պիտի մոռանանք, որ մեր կեանքն ու գոյքը պահպանողը միայն ֆիզիքական ոյժը չէ։ Մենք սիրել ենք կրթութիւն, կուլտուրական զարգացում. և չը նայած որ փոքրաթիւ ենք, միշտ ուժեղ ենք երևացել մեր թշնամուն հէնց այդ ձգտումով։ Մի կատարեալ անէծք կը լինի մեզ համար, եթէ միայն ֆիզիքական ոյժի վրա յենվենք, յետ մնանք, թողնենք մեր բռնած առաջաւոր դիրքերը քաղաքակրթութեան ասպարէզում։ Մի կատարեալ անէծք կը լինի, եթէ խաւար ոյժերի դէմ մենք մեզ պաշտպանելիս՝ վարակվենք դիմացինի խաւարով, մթնացնենք մեր միտքը։ Ո՛չ։ Մեզ պաշտպանելով, առաջ գնանք, համոզված լինելով, որ դրանով միայն կրկնապատկում ենք մենք մեր ոյժը, մեր դիմացկանութիւնը։

Երբէք կռիւ չենք սիրել, բայց աշխատել ենք լինել մարդկային իրաւունքների տէր, առաջ գնացող մարդկութեան անդամ։ Այժմ էլ, միշտ էլ այսպէս պիտի լինենք։

Ուրեմն, կանգ չառնենք։ Խաւարի հետ կռւելով, թէև արիւնաթաթախ, թէև հրդեհների մէջ խանձված, առաջ գնանք։

Այն ժամանակ միայն կարող ենք ասել թէ ինքնապաշտպանութեան ոյժ ունենք և մեզ համար սարսափելի չէ ոչ թանգարանի զարդ դառնալու դատավճիռը, ոչ Նախիջևանի գաւառի թուրք սպանողի սպառնալիքը, թէ մի հատ հայ չը պիտի մնայ մեր երկրում։

Մենք կարհամարհենք այդ յոխորտանքները, եթէ ապացուցանենք, որ հեշտ մարսվող կտորներ չենք։ Իսկ այդպիսի կտոր դառնալու համար չը պէտք է միայն փշերով ծածկվենք, պէտք է քաղաքակրթութեան, առաջադիմութեան մէջ էլ մխված լինենք, պողվատի կարծրութիւն ստացած։

Ահա ինչ տեսակ ինքնապաշտպանութիւն եմ ցանկանում հայ ազգին։ Դրա համար պէտք է համախմբել մեր բոլոր ոյժերը, պէտք է գործի հրաւիրել մեր ամբողջ բարոյական կարողութիւնը։ Կազմակերպվենք, ոչինչ զոհ ու զրկանք չը խնայելով։ Ռէֆորմների աւազանում մկրտված, նոր Ռուսաստան—ահա մեր փրկութեան արշալոյսը։ Գնանք դէպի այդ լոյսերը մեր հոգու ամբողջ թափով։ Մենք՝ վերածնունդի հետ, մենք մեր ընդհանուր հայրենիքի բոլոր փայլեցնող տարրերի առաջին շարքերում։

Չը մոռանանք։ Թուրքը մեզ կը յաղթէ այն ժամանակ, երբ մոռանանք այս ճանապարհը։ Գործենք, անվերջ ու անդուլ գործենք...

Լ.

ՎԵՐՋԻՆ ԴԷՊՔԵՐԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Հոկտեմբերի 12—13-ից սկսած Թիֆլիսի ազգաբնակութեան մէջ երևում էր մի չարագուշակ, մի անհանգիստ տրամադրութիւն։ Ամեն մարդ աշխատում էր ուտելիքի, լուսաւորութեան և ուրիշ անհրաժեշտ իրերի պաշարը գնել, որովհետև ամենքը գիտէին, որ գաղտնի կազմակերպութիւնները միացած թռուցիկներ են հրատարակել գործադուլի մասին։

Խանութները լիքն էին գնորդներով։ Առևտրականներն առիթից բաւական օգտվեցին։

Հոկտեմբերի 15 ին, շաբաթ օրը կատարվեց։ Գործադուլը լիակատար էր։ Չը կար ոչ մի խանութ ոչ մի գործարան, ոչ մի արհեստանոց։ Մեռել էր երկաթուղին, էլէքտրաքարշը, կառքերը... ամեն ինչ։ Միայն թուրքերի բազարում տեղ տեղ գաղտագողի միս էին մորթում և նոյն ձևով էլ վաճառում։

Գործադուլի առաջին իսկ օրից զօրքերը բազմացան փողոցներում։

Գործադուլ հրատարակող կուսակցութիւնները որոշ պահանջներ էին դրել, բայց դրանք այս անգամ այլ ևս նեղ տնտեսական ու դասակարգային բնաւորութիւն չունէին, այլ լայն քաղաքական գոյն էին կրում։

Օդը լի էր չարագուշակ նշաններով։ 2—3 օր մեռելութիւն էր փողոցներում։ Զօրքերի բազմութիւնը պատրաստ կանգնած էր փողոցներում կարգը վերահաստատելու համար։

3 օր այդպէս լարված, սպասողական դրութեան մէջ ապրեցինք առանց լրագրի։

Գործակալութիւնների հեռագիրներն էին, որ մեզ հասցնում էին հատ ու կտոր տեղեկութիւններ ներքին Ռուսաստանի նահանգներից, մայրաքաղաքներից և այլ վայրերից։ Գործադուլն ամեն տեղ էր, նա ընդհանուր էր և համապետական։

Հասարակութիւնն օր օրի վրա սպասում էր զօրքերի և գործադուլաւորների ընդհարում, կամ մի այլ տեսակ արիւնհեղութիւն։

Եւ յանկարծ—այդ չարագուշակ սպասողական տրամադրութեան ծովում երևաց Կայսերական մանիֆէստը։

Հոկտեմբերի 18 էր այդ օրը։ Առաւօտեան ժամը 8 ից արդէն տնական, կոնֆիդենցիալ ճանապարհներով լուր էր հասել հասարակութեան ականջին, որ սահմանադրութիւն է հրատարակված։

Փողոցների տեսքն իսկոյն փոխվեց։ Մարդիկ մանրիկ խմբերով այս ու այն տեղ հաւաքված, իրար հաղորդում էին «հաստատ» աղբիւրից լսած այդ լուրը։ Վերջապէս ժամը 9-ի մօտերը երևան եկան բէժինգտոնի վրա տպված հեռագիրները։

Մարդիկ իրար ձեռից էին խլում այդ մի կտոր թուղթը։ Իւրաքանչիւր երեսին տալիս էին 20, 50 կոպէկ, նոյն իսկ 1 րուբլի։

Ամբողջ քաղաքի ազգաբնակութեան խօսակցութեան միակ առարկան մանիֆէստն էր։ Կարդում, վիճում, խօսում, նորից կարդում, նորից մեկնաբանում էին։ Մարդիկ ուրախութիւնից աչքերն էին տրորում, աչքերին չէին հաւատում։

Ժողովների և խօսքի ազատութիւն, անձի, անհատի անձեռնմխելիութիւն... Այդ ամենը տարօրինակ կերպով էին հնչում ամենքի ականջին։ Մենք Ռուսաստանում, Կովկասում, հայ թուրքական գազանութիւնների օրերում այդպիսի խօսքեր...

Շշմած էր հասարակութիւնը, մի առժամանակ քարացած։

Բայց անցաւ առաջին վայրկեանը. Նրան հետևեց մի այլ բան, մի փառահեղ տեսարան, որի նմանը Ռուսական կայսրութեան պատմութիւնը գուցէ երբէք չէ տեսել։

Առաջին ցնցեցնող վայրկեաններն անցան, մարդիկ ցնվեցին, իրար խառնվեցին։

Արքունական թատրօնի առաջ, Գոլովինսկի պրօսպէկտի վրա, հաւաքվել էին մի քանի տասնեակ մարդիկ և տաք-տաք վիճաբանում էին։ Ժամը 12-ի մօտերն էր։ Վէճը քանի տաքանում էր, այնքան աւելի հասարակութիւնը խռնվում էր վիճաբանողների շուրջը։ Կամաց կամաց կազմվեց մի բաւական խոշոր աուդիտօրիա, մի հասարակութիւն, որին կարելի էր մի բան ասել, քարոզել, պարզել։

Վաղուց, վաղուց շատերը սպասում էին մի ազատ խօսք ասելու, երկար ժամանակ մարդիկ տենչում էին ազատ խօսել, իրանց մտածածն ազատ արտայայտել, առանց ցենզուրայի, առանց «բանտ երթալու» երկիւղի։

Եւ լեզուները բացվեցին։ Դժուարն առաջին օրինակն էր. մի կտրիճ տուեց այդ օրինակը։ Նա վեր թռաւ օպերայի քարէ սանդուղքների վրա և ճառեց։

Դա եղաւ առաջին միտինգը։

Ու այնուհետև հինգ օր շարունակ փառաւոր միտինգներ, հանդիսաւոր թափօրներ Թիֆլիսի բոլոր մասերում։

Առաջին օրը և եթ պարզվեցին յեղափոխական կարմիր դրօշակները։ Նրանք շատ էին և պէսպէս. Մի կողմում Սօցիալ Դէմօկրատներն էին, միւսում Հ. Յ. Դաշնակցութիւնը, մի այլ տեղ Սօցիալիստ Յեղափոխականները, նրանցից այն կողմ վրացի սօցիալիստ դաշնակցականները կամ Սաքարթվէլիստները։

Դրանք բոլորն էլ տարիների, տասնեակ տարիների կեանք ունեն. վաղուց է նրանք կուսակցութիւններ են, կազմակերպութիւններ ունեն իրանց կենտրոնական և ապակենտրոնական կազմերով, իրանց վարչական, գործադիր և այլ մարմիններով։

Բայց նրանք բոլորն էլ մինչև օրս «գետնի տակն» էին, այնտեղ գաղտնի, մթութեան մէջ էին ապրում։ Նրանք սարսափ էին ազդում ամենքին, որովհետև գաղտնիքի քողով էին ծածկված։ Սակայն եկաւ մի կախարդական խօսք, Պետերբուրգից հնչվեց մի զօրաւոր բառ—ազատութիւն—և նրանք բոլորը դուրս եկան գետնի երեսը, ազատ օդի մէջ։ Եւ ամենքը տեսան, որ նրանք էլ միւսների նման մարդիկ են, գուցէ և աւելի անկեղծ, աւելի մաքուր, մտաւորի, խեղճի, թշուառի համար գուցէ աւելի սրտացաւ և անպայման անձնուրաց։ «Գետնի տակ» ապրելը, հալածանքը, բանտը գուցէ նրանցից շատերին դարձրել են ջղային, թունաւոր ու անհամբերատար, բայց մի անգամ արդէն հնչված «ազատութիւնը» նրանց այսուհետև կը դարձնէ աւելի առողջ, աւելի բազմակողմանի...

Հինգ օր շարունակ առաւօտեան ժամը 10 ից մինչև երեկոյեան 6—7-ը անընդհատ միտինգներ էին կատարվում բազմաթիւ կարմիր դրօշակներով, անվերջ ու յաճախ միօրինակ կրակոտ ու կարմիր ճառերով։ Բոլոր ճառախօսները ողջունում էին ռուսական լայնածաւալ կայսրութեան ազգաբնակութեան տարած այս խոշոր յաղթանակը, բայց բոլոր ծայրայեղ կուսակցութիւնների ներկայացուցիչներն էլ գտնում էին, որ դեռ մանիֆէստն առաջին քայլն է, պէտք է դրանով չը բաւականանալ, այլ առաջ գնալ, նոր ու նոր նուաճումներ անել քաղաքական ազատութեան, տնտեսական հաւասարութեան և կուլտուրայի ճանապարհին։

Առաջին օրը միտինգները խառն էին. միայն պրօսպէկտի վրա 2—3 տեղ ճառախօսում էին, մի խումբը օպերայի առջևն էր, միւսը Արտիստական ընկերութեան, երրորդը Փառքի Տաճարի։ Դա էր սահմանը. դրանից այն կողմ արդէն սալդաններն էին կանգնած. երկու-երեք շարք զինուորներ փակել էին պրօսպէկտը և չէին թողնում մարդկանց անցնել փոխարքայի պալատի առջևով։

Երկրորդ օրը միտինգների վայրը կրկին պրօսպէկտն էր։ Այդ օրը խիստ աչքի էին ընկնում երկու խմբեր—«կենտրոնականների» կամ ցենտրալիստների (սօցիալ դէմօկրատ) և «ապակենտրոնականների» կամ ֆեդերալիստների (դաշնակցականների)։ Երկու խմբերն էլ բացատրում էին օրվայ այրող խնդիրները, ծրագիրները. ճառախօսները վերաքննութեան էին ենթարկում ամբողջ անցեալը, կառավարական սկզբունքները, այս կամ այն վարիչ անձի գործադրած սիստեմը և այլն։ Անպայման, այդ բոլոր ճառերը կազմված էին արագ, շատ շտապով, նոյն իսկ բոլորովին անպատրաստ։ Խօսողներից ոմանք նոյն իսկ բոլորովին կրթական ու զարգացողական պաշար չունէին։ Ով մի բան ունէր սրտում, ում մաշում էր որ և է հարց, թռչում էր վեր, ընկերների ուսերի վրա և ճառում։

Զրկեա է մեր պետութեան հասարակութիւնը. նա իր կեանքում ազատ խօսք չէ լսել։ Երբ մի անգամ լեզուները բացվեցին, սկսեցին խօսել շատ խելացի, բայց նոյնպէս և շատ չը կշռված ու չը մարսված բաներ։

Երրորդ օրը խմբերը բաժանվեցին։ Բանւորականները քաշվեցին իրանց թաղը—Նախալովկա, իսկ միւս կուսակցութիւնները մնացին կրկին պրօսպէկտի վրա։

Այդ օրը նուիրված էր հայ-թուրքական յարաբերութիւնների հարցին։ 30—40,000 հոգուց բաղկացած հսկայական թափօրն սկիզբ առաւ Հաւլաբարի Ռազովի հրապարակում, ուր ժողովրդին բացատրվեց օրվայ նպատակը, կարդացվեց և բացատրվեց միտինգի որոշումը և ապա թափօրով, օրինակելի կարգապահութիւնով եկան պրօսպէկտ, ճանապարհին կանգնելով երկու տեղ և քաղաքական ճառեր ասելով։

Երբ թափօրը հասաւ պրօսպէկտ, հասարակութիւնը աճեց և հասաւ 40—50 հազար հոգու։ Դրօշակները ծածանում էին և նրանց ստուերի տակից ճառախօսները քննադատում էին թուրք-հայկական յարաբերութիւնը։ Խօսում էին ռուսներ, վրացիներ և հայեր։ Բոլորը միաբերան պնդում էին, որ այդ արիւնալի ու տնաքանդ յարաբերութիւնը ադմինիստրացիայի գործն է. նա է զինում ազգերին ու ժողովուրդներին իրար դէմ, նա է պրօվոկացիայով պարապում, նա էլ պարտաւոր է վերջ դնել այդ յարաբերութիւններին։ Այդ մտքով կազմված րէզօլիւցիան ուղարկվեց Կովկասի Փոխարքային՝ Թիֆլիսի գեն.-նահանգապետի ձեռքով։

Յետոյ հասարակութիւնը նոյն օրինակելի կարգով և թափօրով դիմեց դէպի Մէտէխի բերդը, նրա պատի դիմաց կանգ առաւ։ Ճառախօսները կրկին դիմեցին հասարակութեան, պարզեցին, որ մինչ այժմ ազատ խօսքի ներկայացուցիչները փակել են Պետրո-Պավգօմսկի բերդում, Սախալինի ու Սիբիրի սառոյցներում, Վօլօգդայում, Արխանգելում... Մէզէնում... Այժմ ստացվել է խօսքի ազատութիւն. ուրեմն՝ թող դուրս թողնեն այդ պատերում փակված ազատախօսներին...

Պէտք է ասել, որ հրատարակված Բարձրագոյն ներման հիման վրա բանտերից և նախնական ձերբակալութիւնից ազատեցին 69 հոգի, որոնք այս կամ այն հասարակ պատճառով բանտարկված էին, բայց շատերը դեռ մնում են բանտում։

Առաջին 3 օրերում արդէն պարզվեց, որ բոլոր կուսակցութիւնները դնում են հետևեալ անմիջական պահանջները.

1) Վերացնել պատերազմական վիճակը։

2) Վերացնել գիւղերից էկզէկուցիան։

3) Բանտերից արձակել քաղաքական բոլոր բանտարկեալներին։

4) Վերջ դնել հայ-թուրքական յարաբերութիւնների մէջ կառավարութեան պրօվօկատօր դերքին և պատասխանատուութեան ենթարկել ադմինիստրացիայի մի քանի յայտնի ներկայացուցիչներին։

Չորրորդ օրը կազմված միտինգները նոյնպէս պտտում էին այդ հարցերի ու պահանջների շուրջը։

(կը շարունակվի)

ԹԻՖԼԻՍԻ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ԺՈՂՈՎԸ

Հօկտեմբերի 22-ին, շաբաթ, այդ կարմիր օրվայ առաւօտը, երբ ամեն ինչ դեռ հանգիստ էր, Թիֆլիսի II արական գիմնազիայի դահլիճում կայացաւ տարրական և միջնակարգ բոլոր դպրոցների մանկավարժների ընդհանուր ժողով։ Հաւաքվել էին 500-ից աւելի մանկավարժներ։ Բացակայ էին միակ հայ միջնակարգ դպրոցի մանկավարժները, երևի նրանց իմաց չէր տրված։

Ժողովը կազմված էր այն նպատակով, որ իրականացվի վաղուց կարևոր պահանջ դարձած «մանկավարժների կօրպօրացիայի» կամ մանկավարժների դաշնակցութեան հարցը։

Ժողովը բաց արեց II գիմնազիայի դիրեկտոր պ. Դրբօգլաւը, որը բացատրեց ժողովի նպատակը և հրաւիրեց նախագահ ընտրել։ Ձայների մեծամասնութիւնով նախագահ ընտրվեց II իգական գիմնազիայի ուսուցիչ պ. Շէնգէլը։ Ընտրվեցին դաշնակցութեան բիւրօի համար 3 անդամ և 2 քարտուղար, որով վարիչ մարմինն արդէն պատրաստ էր, մանկավարժների դաշնակցութիւնն արդէն իրականացած և հօկտեմբերի 17-ի մանիֆէստի հիման վրա, արդէն մի օրինական ու ազատախօս մարմին հրատարակված։

Արտասանվեցին բազմաթիւ ճառեր, որոնց ընդհանուր միտքն այն էր, որ պէտք է վերջ դնել կառավարական դպրոցներում գոյութիւն ունեցող չինօվնիկական, բիւրօկրատիկական կապերին և սալդատական յարաբերութիւններին. ժամանակ է, որ պետական դպրոցների մանկավարժները լինեն իսկական մանկավարժներ իրանց սաների վերաբերմամբ—խօսքով և գործով կենդանի օրինակ դառնան նրանց։

Այո՛, կաւելացնենք մենք, քանի դեռ իսկական, սրտացաւ, առաջադիմական, արմատական իդէաներով տոգորված ուսուցիչը չէ հանդիսանում ղեկավար իր սաների, քանի նա չէ դառնում նրանց մտաւոր զարգացման, նրանց դասից դուրս ընթերցանութիւնների, նրանց քաղաքական աշխարհահայեացքի կազմութեան առաջնորդ ու ղեկավար—մինչ այդ միշտ ուրիշը, մի ագիտատօր, գուցէ թերուս ու փառամոլ, կը բռնէ ուսուցչի իսկական տեղը, կը գլորէ, կոչընչացնէ մանկավարժի հեղինակութիւնը և կը քայքայէ դպրոցի ամբողջ բարոյական նշանակութիւնը։ Այժմ մեր կայսրութեան մէջ դպրոցների սաներին ղեկավարում են գաղտնի կազմակերպութիւնները, սրտացաւ ագիտատօրները, ծայրայեղ կարծիքների ներկայացուցիչները։ Պատճառը. որովհետև ուսուցիչը մանկավարժ չէ, այլ չինօվնիկ, նա լուսաւորիչ չէ, այլ ռուսացման ագէնտ, հպատակութիւն քարոզող։ Իսկ մատաղ ու մաքուր աշակերտական հոգին բողոքող է, նա ըմբոստ է, ծայրայեղ ազատասէր։

Ճառախօսներին դառնանք։

Նրանք ասացին, որ մինչև ուսուցիչը գործով ու խօսքով օրինակ չը դառնայ իր սաներին, դպրոցի ներկայ քայքայված կեանքը չի վերականգնվի։

Կամաց-կամաց ճառերն սկսեցին ստանալ քաղաքական բնաւորութիւն։ Հռետօրներից մէկը յայտարարեց, որ ձեռք բերված ներկայ ազատութիւնն արդիւնք է կռւող ու նահատակված գործիչների, ինչպէս Տրուբեցկօյը և ուրիշները։ Չը լինէր նրանց հերոսական կռիւը և նրանց թափած արիւնը, մենք այժմ չէինք ունենայ խօսքի, մամուլի, ժողովների ազատութիւն։

Ժողովին առաջարկվեց յարգել ազատութեան համար ընկած մարտնչողների յիշատակը, որ և ժողովը կատարեց՝ ոտքի ելնելով։

Կրկին հետևեցին մի շարք ճառեր, որոնցով ցոյց էր տրվում այն սերտ ու անխզելի կապը, որը գոյութիւն ունի դպրոցի ու կեանքի մէջ, մանաւանդ քաղաքական հարցերի ու դպրոցի նօրմալ պարապմունքների մէջ։ Այդ բոլորից յետոյ ժողովն ընդունեց հետևեալ որոշումները. անհրաժեշտ է

1) Ընդհանուր ներում բոլոր քաղաքական յանցաւորներին։

2) Վերացում պատերազմական դրութեան։

3) Վերացում գիւղերում դրված էկզեկուցիայի։

Եւ ամբողջ ժողովը, մօտ 5—600 հոգի, ճանապարհ ընկան խնդրելու Փոխարքային, որ այդ 3 կենսական պահանջները կատարվեն։

Դժբաղդաբար այնքան մանկավարժներից ոչ մէկը չը մտածեց, որ իրանց սաների ահագին տոկոսը հայերը և այդ հայ սաները երբէք չեն կարող անվրդով գլխով ու սրտով զբաղմունքների նուիրվել, քանի դեռ կառավարութիւնը վերջ չէ դնում հայկական գաւառներից լսվող թուրքական արիւնարբու գազանութիւններին։ Այո՛, մեր պարոն մանկավարժները, որոնք մտածեցին գիւղերից էկզեկուցիան վերացնելու մասին, չը մտածեցին ամենևին մեր երկրին արատ ու խայտառակութիւն բերող թուրքական բաշիբօզուկութիւնների մասին։

Շարունակենք։

Ուսուցիչները ճանապարհ ընկան Վերայի կամուրջով դէպի պալատ։ Հազիւ հասան նրանք ձիատար պօստի կայանի առաջ, երբ սարսափահար փախչող քաղաքացիները յայտնեցին նրանց, որ անհնար է առաջ գնալ, որովհետև արիւն է հոսում Ժողովարանի կողմերում։

Իսկոյն այդտեղ և եթ ժողով կազմվեց և որոշվեց հաւաքվել հետևեալ առաւօտ ժամը 10 ին II արական գիմնազիայում։

Եկան հետևեալ օրը, բայց գիմնազիան փակ էր։ Պ. Դրբօգլաւը յայտնեց, որ գեն.-նահանգապետն արգելել է իրանց ժողովը։ Ժողովականներն այն ժամանակ փողոցում անմիջապէս ժողով արին և կայացրին հետևեալ լրացուցիչ որոշումները. 1) բռնել հօկտ. 22-ի դժբաղդ դէպքը, 2) պահանջել յանցաւորներին դատի ենթարկել և 3) Թիֆլիսի բոլոր դպրոցներում զբաղմունքները դադարեցնել, մինչև որ իրանց բոլոր 6 պահանջները չը կատարվեն։

Եթէ հասարակական բոլոր խաւերը գոնէ այդքան արձագանք տան կեանքում կատարվող երևոյթներին, եթէ նրանք գոնէ այդքան բողոքեն տիրող այլանդակութիւնների դէմ՝ շատ արիւն իզուր չի հոսի, շատ զոհեր իզուր չեն ընկնի։

Խաժակ

ԴՐՈՒԹԻՒՆԸ ՇՈՒՇՈՒՄ

Հօկտեմբերի 14-ին

Գեներալ Տակայշվիլին եկաւ Շուշի և երկու օր մնալուց յետոյ երէկ ճանապարհվեց դէպի Գօրիս։ Ժողովրդի ներկայացուցիչները ի միջի այլոց խնդրեցին գեներալին բաց թողնել բանտից Խանքենդու մօտ թիւրիմացութեամբ ձերբակալված 7 հայերին, որոնց թւում է Ռուբէն Իզբաշեան՝ յայտնի փաստաբան Ստեփան-բէկ Իզբաշեանի որդին և բժիշկ-ուսանող Համբարձում Մելքումեան։ Գեներալը յայտնեց, որ ինքը հակառակ չէ նրանց արձակման, եթէ դատախազի կողմից արգելք չը լինի. իսկ դատախազը յայտնեց, թէ ես նրանց վրա մեղադրանք չեմ գտնում։ Երկու իշխանաւորների կողմից անմեղ և ազատ ճանաչված մարդիկ սակայն դեռ այսօր էլ բանտումն են։ Ո՞վ պէտք է հանէ նրանց այնտեղից՝ յայտնի չէ։—Բանից դուրս է գալիս, որ այժմ մեզանում մարդկանց նախ բանտարկում են, յետոյ վրան մեղքեր որոնում։ Այդ անմեղների դէմ, ասում են, ինչ որ կաթ ծախող թուրք Նասիր բողոքել է թէ՝ հէնց դրանք են որ թուրքերի տները կազարմի մօտ այրել են և այդ անփաստ բողոքը նիւթ է ծառայել անմեղներին դարձեալ բանտում տանջելու։ Խեղճ հայոց հարիւրաւոր տների ու խանութների անլեզու աւերակներ... ապա ձեր դիմաց ով պէտք է պաշտպանէ։ Ձեր տէրերը մի Նասիրի չափ էլ նամուս չունեցան և ձեզ բաց երկնքի տակ կենդանի բողոքի անպաշտպան արձան թողնելով իրանք փախան Թիֆլիս, Արմաւիր, Մոսկվա, Պետերբուրգ, արտասահման։

Գեներալ Տակայշվիլու հետ դէպի Գօրիս ճանապարհվեցին և Մինքենդի գերիները։ Ես տեսայ այդ անտիրական գերիներին ոտով և ֆուրգօններով քաղաքից դուրս գնալիս։ Որքա՜ն ճնշված, որքա՜ն յուսահատ։ «Ամա՜ն Աստուած, ողջ առողջ տեղ կը հասնե՞նք». ասում էին նրանք խոր հոգոց հանելով։—Գիւղն ե՞ք գնում. հարցրի ես։ Իմ պատասխանը եղաւ մի խիստ, յանդիմանական լուռ հայեացք։ Իսկ մի ուրիշը պատասխանեց.—ո՞ւր է մեր գիւղը, դժոխք է այնտեղ...

Դրանք քսան հոգի էին, մեծ մասը սիրուն կիներ ու թարմ աղջիկներ, որոնց թուրք խուժանը սրի ու կրակի քուէներով ջոկել էր հարեմի զարդ դարձնելու և դէպի երկրորդ «խուժաստան»—Արաքսի հովիտը գերեվարելու. բայց հայի Աստուածը փրկեց նրանց Շուշու շրջակայքում։ Գնում են այդ ազատված գերիները։ Բայց ինչ յուսով, ինչի համար. ո՞ւր է տուն, տեղ, հաց, շոր, գործ, հող, պարապմունք։—Ահա հարցեր, որոնց լուծելու, իրագործելու համար հարկաւոր է մարդ, ոյժ և փող...։

Կարդացի «Մշակում», որ պ.պ. Նաւասարդեան, Առաքելեան և Լէօ դիմում են արել հանգած Բարեգործական ընկերութեան վերաբացման իրաւունք խնդրելու։ Իբրև մէկը Շուշու անդրանիկ ճիւղի վարչութեան գործողներից, ներկայ դառն օրերի նկատմամբ, կասեմ, որ աւելի քան ժամանակն է աշխատել օր առաջ այդ ցանկալի հիմնարկութեան խախտված ու մարած իրաւունքները վերականգնած տեսնել։ Շուշու ճիւղի գրադարանը անճարութիւնից տուած է քաղաքային վարչութեան ձեռքը և մատնված է գրեթէ մոռացութեան. նա մնացել է հին, մեր օրերի գրադարանը և նորագոյն հրատարակութիւններից զուրկ։ Ճիւղի դրամագլուխը, արժէթղթերով, մնում է նախկին վարչութեան անդամներից մէկի մօտ, իբրև աւանդ։ Քանի անգամ դիմում արինք նահանգական իշխանութեան, որ թոյլատրվի նօրմալ-օրէնքով անկախ բարեգործական ընկերութիւն բանալ Շուշում, բայց չաջողվեց շատ պարզ պատճառով և դրամագլուխն ստանալու և մի բանի գործադրելու հնար չունեցանք։ Այժմ, քանի որ կառավարութիւնը վերադարձնում է հայոց ազգի կորցրած իրաւունքները, որի մէջ, անկասկած տեղ կը բռնէ և Բարեգործական ընկերութեան հարցը, ցանկալի է, որ այդ հարցն արծարծողները աշխատեն շուտափոյթ իրագործման, որից յետոյ և Բարեգործական ընկերութիւնը իր ճիւղերը բանալով, սկսէ իր գործը, որի հրատապ խնդիրներից մէկը պէտք է լինի անշուշտ աղէտի օրերում մնացած հայերին անյապաղ օգնութիւն հասցնելը։

Արէք այդ, բայց մի՛ մոռանաք և մեր ցաւերի էական արմատը։—Քանի որ հայ և թուրք կորցրել են իրանց հաւատն ու վստահութիւնը դէպի բարի հարևանութիւնը, քանի որ ընդհարումներին վերջ տալ դժուար է լինում և, ընդհակառակը, գնալով համաճարակն աւելի ընդարձակ ծաւալ է ստանում և մութ տարրերը երկրի ամենախուլ անկիւններում անգամ աշխատում են կոտորած առաջացնել, իսկ ադմինիստրացիան անզօր է դրա առաջն առնել, քանի որ դրութիւնը երկար շարունակելով՝ երկու տարրերն էլ հալումաշ պիտի լինեն տնտեսապէս և ֆիզիքապէս, ինչպէ՞ս լռել և մեզ դարձնել անմեղ ինքնասպաններ. ինչպէ՞ս փաստաբան չը վարձել և չուղարկել Պետերբուրգ, դիմումներ չանել, մեր դատը չը պաշտպանել, կտրուկ միջոցներ չը խնդրել...։ Եթէ մեղաւոր ենք, թող մեզ բնաջինջ անեն միանգամից, իսկ եթէ արդար, թող մեզ հնարաւորութիւն տան ապրելու։ Մինչև ե՞րբ այսպէս պէտք է տանջվենք։ Սպանութիւն, սով, սարսափ, տանջանք, հրդեհ, աւար, գաղթ։—Ա՞յս է մեր բաժինը Ռուսաստանի վերածնութեան արշալոյսին...

Տ.

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Հօկտեմբերի 11-ին

Սարը երկնեց ու մուկ ծնեց։ Ահագին դղրդիւն, մեծադղորդ ճառեր, որոշումներ, գործադուլներ, վերջապէս մայրաքաղաքում մի քանի օր տևող խռովութիւններ, իսկ վերջը հետևանքը—ոչինչ։ Ոչինչ, ի հարկէ, բանւորների, աշխատող դասակարգի վերաբերմամբ։ Այն դասակարգի, որի արեան քրտինքն է այդ անապատները ոսկի կոյտեր դարձրել, այն դասակարգի, որն արհամարհելով ամեն մի վտանգ, ստիպված է մի կտոր հացի համար տանել ամենացածր աշխատանքը, ամենածանր լուծը։

Ինչ տուեցին նրանց, բանւորներին։ Արդեօք գոնէ նրանց մի հոգսին, մի պահանջին բաւականութիւն տուեցի՞ն. Թողած ամեն բան մի կողմ, մտածեցի՞ն իսկապէս ինչքան մեզ, նոյնքան և իրանց համար մի ամենաանհրաժեշտ բանի մասին ապահովութեան մասին։ Գտա՞ն դրա համար մի արմատական միջոց։ Ոչ և ոչ։ Իրանք ստացան 40 միլիօն փող, իսկ բանւորներին տուեցին իբր թէ ապահովութիւն—յանձին 16 թաղապետների և 150 ոստիկանների։ Այդ հաշւով, ուրեմն, նաւթահանքերի այդքան միլիօնների վնասների պատճառը այդքան ոստիկանների բացակայութիւնն է եղել։ Ո՛րպիսի ինքնախաբէութիւն։ Ծիծաղելի չէ՞, ընթերցող։ Արժէ՞ր միթէ այդքան թաղապետների և ոստիկանների համար այդքան աղմուկ բարձրացնել, ամբողջ աշխարհի առաջ այդքան լալ։

Այժմ աւելի քան պարզ է։ Բանւորի շահը չէր առաջնորդում նրանց և ոչ էլ ապահովութեան խնդիրը։ Սեպհական կաշին, անձնական օգուտն էր նրանց խօսեցնողը։ Բանւորական խնդիրը, երբ բանւոր ներկայացուցիչներով, միայն ձևի համար էր դրված մէջտեղ։ Մօտիկ ապագան ցոյց կը տայ, թէ ինչքան նպատակայարմար է դրանց մտածած միջոցը։ Իրականութիւնը շուտով կը համոզէ, թէ ինչպիսի ապահովութիւն կարող է տալ նոր ոստիկանութիւնը։ Շուտով կապիտալիստները կը համոզվեն, որ ապահովութեան խնդիրը ինչքան մեզ է վերաբերում, նոյնքան էլ, և դեռ մի քիչ էլ աւելի, իրանց է վերաբերում, որի համար և հարկաւոր էր լուրջ միջոցներ ձեռք առնել։

Կը սպասենք և կը տեսնենք։ Առ այժմ կատարած համարելով իրանց պարտքը, հանգիստ խղճով սկսում են շարունակել գործերը։ Գործերն սկսվել են, բայց գործաւոր չը կայ։ Չը կայ բանւոր, չը կայ մշակ։ Առանձնապէս աչքի է ընկնում հայ բանւորի բացակայութիւնը։ Շատ նաւթահանքեր չեն կարողանում կանոնաւոր կերպով շարունակել իրանց գործերը, մշակների բացակայութեան պատճառով։ Կանոնաւոր կերպով շարունակում են միայն այն նաւթահանքերը, որոնց մարդիքը անկարգութիւնների սկզբից մինչև այժմ չեն հեռացել այստեղից և մնացել են իրանց տեղերում։ Մնացածները մի կերպ կիսատ-պռատ բան են անում։ Վերջին օրերս միայն հատուկէնտ երևում են Ղազախից և Դարաչիչագից եկած հայ բանւորներ։ Իսկ Ղարաբաղից և ուրիշ տեղերից եկած հայ բանւորներ բոլորովին չը կան։ Բանւորների քչութիւնը բնականաբար ազդել է և օրավարձի գնի վրա։ Այն մշակը, որն առաջ ստանում էր ամիսը 20 ր., այժմ 25 րուբլով էլ չէ համաձայնվում։ Կառավարիչները առ այժմ ստիպված տալիս են այդ գները։ Իսկ թէ ո՞րքան ժամանակ կը տևեն այդ գները, շատ էլ դժուար չէ իմանալ։ Առ այժմ ընդհանրապէս, բացառութիւնների մասին չենք խօսում, հայ կառավարիչները աշխատում են պահել հայ բանւորներ և ծառայողներ, բայց սրանց պակասութիւնը դժուար դրութեան մէջ է դնում նրանց։ Ամեն բոպէ օտարազգի բանւորները առաջարկում են իրանց ծառայութիւնները։ Եթէ այսպէս շարունակվի, անհրաժեշտօրէն հայ տարրին պէտք է փոխարինէ օտարազգին։

Ձեզ ենք դիմում, հայ բանւորներ։ Ի՞նչ էք սպասում։ Վախենում էք, որ նորից ենթարկվէք վտանգի։ Բայց չէ՞ որ հեռւում այդպէս սպասելով ոչ միայն ապահովութիւն ձեռք չէք բերի, այլ և ձեր ունեցած տեղն ու դիրքն էլ էք կորցնում։ Ուշանալը անօգուտ կը լինի։ Հայ եղբայրներ, բաւական համարելով ձեր այդքան թափառելը, վերադարձէք ձեր գործերին։ Թողնելով ձեր տեղն ուրիշներին, դրանով ուրախացնում էք մեր հակառակորդին և նպաստում նրան իր նպատակին հասնելու։ Ձեր փախուստով միք հաստատի այն կարծիքը, որ հայը միայն փախչել գիտէ։ Վերադարձէք ձեր տեղերը, քանի ուշ չէ։

Մշակ

ՆԱՄԱԿ ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶԻՑ

Հօկտեմբերի 20-ին

Հօկտեմբերի 18-ին ամեն մի անկիւնից լսվում էին «մանիֆեստ» բառերը։ Ամեն մէկը գլխապատառ գնում էր թերթը և կարծես թէ չը հաւատալով իր աչքերին՝ բարձր ձայնով կարդում էր. «մամուլի, խօսքի, հաւաքումների, ցոյցերի... և այլն ազատութիւն»։

Այս լուրը րոպէապէս հաղորդվելով բոլոր

դպրոցներում, գիմնազիայի և ռէալական դպրոցների աշակերտները, առանց մի րոպէ կորցնելու, հաւաքվեցին և կարմիր դրօշակները պարզած, մարսելիէզներ երգելով՝ դիմեցին դէպի մեծ փողոցը. դրանց հետ միացաւ և բանւորութիւնը, թէպէտ չնչին թւով:

Հասնելով փողոցի ծայրը, Արխիպ-Օսիպովի արձանի մօտ, ցուցարարները հանդիպեցին զինւորական երաժշտական խմբին, որը քաղաքացիների և բազմաթիւ ազգայինների հետ միասին կայսերական մաղթանք նւագելով՝ դիմում էին դէպի գաւառապետի բնակարանը: Ցուցարարները իսկոյն և եթ պահանջեցին դադարեցնել մաղթանքի նւագումը և սկսել մարսելիէզը: Մի փոքր ընդդիմադրութիւնից յետոյ նւագախումբը ստիպված եղաւ զիջել ցուցարարներին: Արտասանվեցին ճառեր այն իմաստով, որ առաջին յաղթական քայլից ոգևորված հարկաւոր է ոչ թէ լռել, այլ շարունակել կռիւը մինչև վերջնական նպատակին հասնելը:

Թէ կարմիր դրօշակները «Թող կորչի միապետութիւնը», «կեցցէ ռամկավարական հասարակապետութիւնը» մակագրութեամբ և թէ պարտութիւնը, ինչպէս երևում է, գրգռել էին այստեղի ազգայիններին և մանաւանդ խուլիգաններին, ուստի վերջինները երեկոյեան դէմ կպչում են գործի և ամեն մի պատահած աշակերտի կամ ինտելլիգենտի պատում իրենց յատուկ քոթակով: Այդ պատուին արժանանում է, ի միջի այլոց, և տեղիս համակրելի անձնաւորութիւններից մէկը—քաղաքային հիւանդանոցի բժիշկ Իսակովիչը: Այդքանով չը բաւականանալով, պատրաստւում են Կուրսկի սլաբօդկայի մուժիկներին հետևեալ օրվայ ազգայնական ցոյցին ընդդէմ յեղափոխականների:

Հետևեալ օրը, ամսիս 19-ին, առաւօտեան մօտ ժամը 9-ին աշակերտները կարմիր դրօշակները պարզած սկսեցին ցոյցը. երկաթեայ կամրջի մօտ միացան աննշան թւով բանւորների հետ ու դիմեցին մնացած ուսումնարանները և գործարանները՝ դադարեցնելու ուսումը և աշխատանքը. դրանց ուղեկցում էր ահագին երկսեռ հետաքրքրվող բազմութիւնը:

Մօտ ժամը 12-ին, երբ ցուցարարները մեծ փողոցով դիմում էին դէպի իգական գիմնազիան, դարձեալ Արխիպ-Օսիպովի արձանի մօտ հանդիպեցին ազգայիններին, որոնք Կայսեր պատկերով և մաղթանքով, ինչպէս երևում է, դիմում էին դէպի գաւառապետի բնակարանը:

Տեսնելով կարմիր դրօշակները, մի կողմը կատաղած սկսեց ատրճանակ պայթեցնել. այդ պայթիւնը, մանաւանդ հետաքրքրվող բազմութիւնը սարսափահար փախուստի մատնեց: Քաղաքն ընդունեց աննկարագրելի տեսք. սկսվեց երկու կողմից ատրճանակաձգութիւն: Ազգայիններին միացան զինւորները ու կրակեցին դէպի աշակերտները և այն ամբոխը, որը կամենում էր, շատ կարելի է, իրապէս վայելել այսքան արիւնահեղութիւնից յետոյ ստացած ազատութիւնը:

Ցրելով ցուցարարներին, ազգայինները զօրքի հետ միասին դիմեցին դէպի Կրասնօբեադսկայա փողոցը: Թաթոզեանների տան մօտից անցնելիս պայթում է ատրճանակ (ճշտված չէ որ տեղից): Ազգայինները գոռալով՝ թէ հայի տնից ռումբ ձգեցին, յարձակվում են Թաթոզեանի տան վրա և թալան տալիս. իսկ զօրքը, որ հետևում էր ամբոխին, փոխանակ հանգստացնելու ամբոխին, կարգապահութեան մասին մտածելու, ընդհակառակը, վերջինների հետ միացած, զալպ է տալիս խեղճի տան վրա, ջարդ ու փշուր անում եղած չեղածը: Բացի Թաթոզեանի տնից թալանի են մատնված դրացի երկու վրացու խանութները:

Ուրիշները ինչ ասեն ասեն բաւական է, որ Թաթոզեանի տնից ատրճանակ է արձակվել (որը դեռ հաստատված չէ) հետևապէս սկսողն էլ, մեղաւորն էլ հայերն են. ահա թէ ինչ է թելադրում ազգայինների լօգիկան: Մթնոլորտը յագեցած է հայերի հասցէին ուղղված մեղադրանքներով և այն էլ մի օտար մթնոլորտը՝ Վլադիկավկազի, ուր համեմատած քաղաքի ազգաբնակութեան հետ երկու ջուխտ մէկ կէնտ հայ հազիւ լինի: Այո, հային հանգիստ չեն թողնում և այնտեղ, ուր նա ոչնչութիւն է կազմում իր թւով:

Թալանը վերջացնելուց յետոյ, ազգայինները զօրքի և երաժշտական խմբի հետ յաղթական դրօշակը պարզած շրջեցին համարեա ամբողջ քաղաքը երգելով և նւագելով կայսերական մաղթանքը: Այդ օրը հայերից սպանվեց մէկը, իսկ ընդհանուր սպանվածների և վիրաւորվածների թիւը 40-ից անց է:

Երէկ, ամսի 20-ին, անցաւ խաղաղ. միայն գիշերվայ՝ ժամը 12-ին մօտ գաւառական վարչութեան ծառաները վերցնում են կառավարութեան կասսան և ուզում են կառքով փախցնել, բայց նկատվում են պրիստաւից. սկսվում է հրացանաձգութիւն և աջողվում է բռնել գողերից երեքին:

Ականատես

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

—

Հոկտեմբերի 15-ին

Մեր հարևան թուրքերը, որոնք մի շաբաթ առաջ քաղաքումս յաճախակի կրկնվող աշակերտական գործադուլները հայերին, հայ աշակերտութեան վերագրելով, գրգռված էին երևում հայ հասարակութեան, առանձնապէս հայ ինտելլիգենցիայի դէմ, այժմս խօսել են սկսել էլի փոխադարձ սիրոյ ու եղբայրութեան մասին, մի ցանկալի բանի մասին, որին մենք միշտ ձգտել ու ձգտում ենք անպայման անկեղծութեամբ, առանց յետին մտքի ու միտումների... Ժամանակ է, որ սէրն ու եղբայրութիւնը գործով արտայայտվեն, գործով. առանց գործի նրանք շատ կրկնվելուց բանալ ֆրազներ են դառնում ու այդ պատճառով տպաւորութիւն չեն թողնում, չեն թափանցում մարդկանց սրտերը: Փոխադարձ սէր ու եղբայրութիւն արտայայտելու առիթներ շատ են պատահել ու պատահում. բայց առիթներից չեն օգտվում գեղեցիկ բառերից գործի անցնելու, այնպիսի գեղեցիկ գործի, որով կարելի լինի գեղեցիկ, գրաւիչ դարձնել մեր դառը, դաժան, յուսահատեցուցիչ իրականութիւնը:

Եղբայրութիւնն ամրապնդելու ամենալաւ առիթն էր քաղաքային ընտրութիւնները. հայ համալսարանական ինտելլիգենտները, կարծեմ, աւելի օգուտ կը բերեն քաղաքին, քան անգրագէտ թուրք մանրավաճառները. առաջիններին մեր բազմադարեան դրացիները սեւացրին առանց քաշվելու, իսկ երկրորդներին ընտրեցին այնպիսի մեծամասնութեամբ, ինչպիսի մեծամասնութեան քաղաքակիրթ երկիրներում արժանանում են տիեզերահռչակ Ժօրէսներն ու Բեբելները միայն... Չը նայած դրան մենք էլի մեծ սիրով լսում, որ մեր դրացիների ճառերը սիրոյ ու եղբայրութեան մասին ու ի սրտէ ձեռք ենք մեկնում նրանց, ինչպէս միշտ մեկնել ենք՝ այն յուսով, որ վերջապէս աննշան չափով գոնէ կիրագործվի ցանկալի եղբայրութիւնն ու սէրը:

Ամսիս 11-ին ու 13-ին խորհրդակցութիւններ կայացան հայ ու թուրք հասարակութեան ներկայացուցիչների մասնակցութեամբ. խորհրդակցութիւններին մասնակցում էին նաև Գանձակի առաջնորդական փոխանորդ Կորիւն վարդապետն ու թուրքաց ախունդ Մահմեդը: Խորհրդակցութիւնները վերաբերվում էին այն միջոցներին, որոնցով հնարաւոր է պահպանել երկու ազգերի հաշտ կենակցութիւնը: Որոշվեց երկու կողմերի յանցաւորներին յանձնել օրէնքին ու բնաւ չը հովանաւորել նրանց:

Ստ. Տէր-Աւետիքեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Վլադիկավկազ, հոկտեմբերի 20-ին

Վլադիկաւկազի հայ հասարակութիւնը իր վերջին ժողովներից մէկում վճռեց իւրաքանչիւր ընտանիքի վրա կամաւոր ամսական տուրք նշանակել հայ-թրքական կոտորածներից վնասված ընտանիքների օգտին:

Այսօր պ. Մելիք-Ազարեանի հասցէով փոխադրվեց 420 րուբլի: Որովհետև լրագրութեան մէջ հարց է բարձրացել այդ նպատակով կանանց արհեստանոց հիմնելու, այդ պատճառով հաւաքողների կողմից խնդրվեց, որ 120 րուբլին յատկացնվի այդ նպատակով: Յայտնելով խորին շնորհակալութիւն մեր յարգելի տիկիններին և օրիորդներին և միւս աշխատողներին, ցանկանում ենք, որ սկսած գործը եռանդով առաջ տանեն և բարի օրինակ դառնան միւս տեղերի տիկիններին և օրիորդներին:

Ն. Տէր-Յովհաննիսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կովկասի Փոխարքայի հրամանով, իբր յիշատակ հոկտ. 17-ի Բարձրագոյն մանիֆէստի, բանտերից արձակված են 69 հոգի, որոնք բանտարկված էին քաղաքական յանցանքների համար կամ վարչական կարգով: Բոլոր այդ ազատվածները դեռ քննութեան և դատի տակ ընկած չէին:

—

Հոկտեմբերի 24-ին Կովկասի Փոխարքան իր մօտ էր հրաւիրել Շէյխ-ուլ-իսլամին և Անդրկովկասի մուֆտիին և յայտնել, որ իր ականջին լուրեր են հասել, թէ մահմեդականները, միացած քրիստոնեաների այն տարրերի հետ, որոնք կատաղած են հայերի դեմ վերջին դեպքերի պատճառով, մտածում են յարձակում գործել հայերի վրա: Փոխարքան յանձնարարել է այդ երկու բարձրաստիճան հոգևորականներին անել այն ամենը, ինչ որ իրանցից է կախված՝ թոյլ չը տալու, որ մահմեդականները կարգը խանգարեն:—Շէյխ-ուլ-իսլամը և մուֆտին հանգստացուցիչ հաւաստիացումներ տուին, որ ոչինչ չի պատահի ու հետևեալ օրը մզկիթներում քարոզեցին, որ մահմեդականները թոյլ չը տան իրանց ոչ մի թշնամական քայլ դրացի ժողովուրդների վերաբերմամբ:—Այդ լուրերն ու քարոզները բոլորովին կոչընչանան, եթէ ոստիկանութիւնը չը ցանկայ «ջուրը պղտորել»:

—

Հոկտեմբերի 17-ին Կովկասի շրջանական զինւորական դատարանում քննվեց պարսկահպատակ Աւագ Արուշանովի գործը: Նա մեղադրվում է նրանում, որ իբր թէ սեպտ. 25-ին ռումբ է նետել Օրթաճալայի ճանապարհին գտնվող կազակների զօրանոցի բակը: Թիֆլիսի ժամանակաւոր գեն.-նահանգապետի կարգադրութիւնով՝ գործը քննվում էր դռնփակ: Զինւորական դատարանը Արուշանովին մեղաւոր ճանաչեց և դատապարտեց կախաղանի: Պաշտպանը տուեց վճռաբեկ բողոք, բայց մերժվեց և հետևեալ օրը և եթ վճիռը տրվեց գեն.—նահանգապետի հաստատութեանը: Հոկտեմբերի 17-ին Ա. Արուշանովը Բարձրագոյն Անունով հեռագիր խփեց՝ ներում հայցելով:

—

Թիֆլիսի քաղաքային դուման շուտով քննելու է ձայնաւոր իշխան Ա. Մ. Արղութեան—Երկայնաբազուկի առաջարկը Թիֆլիսի բոլոր հասակաւոր ազգաբնակութեան աշխարհագիր անելու, աչքի առաջ ունենալով, որ կարող է մօտ ապագայում ընդհանուր ընտրողական իրաւունքը իրականանալ: Քննվելու է նաև բժիշկ Ա. Խատիսեանի առաջարկը՝—ժողովրդական դասախօսութիւններ կազմելու՝ բացատրելու համար պետական դումայի խնդիրները. բացի դրանից բժիշկը առաջարկ է արել, որ քաղաքը տայ մի շինութիւն միտինգներ կազմելու համար:—Ձայնաւոր Ա. Բաբեանը դումային առաջարկ է արել Թիֆլիսում, հոկտ. 17-ի դէպքերը յաւերժացնելու համար, հիմնել ժողովրդական համալսարան և պօլիտէխնիկական մուզէում:

—

Թիֆլիսի քաղաքային դումայի ձայնաւորներն ուզեցին հոկտեմբերի 22-ին և 23-ին ժողովներ անել՝ քննութեան ենթարկելու այն բոլոր միջոցները, որոնք անհրաժեշտ են ազգաբնակութեանը հանգստացնելու, բայց գեներալ-նահանգապետը թոյլ չը տուեց նրանց ժողով կազմելու:

—

Գուրիայում ապստամբութիւն է: Ասում են որ Աջարիան էլ միացել է այդ ապստամբութեան: Այդ լեռնային ժողովուրդները, քրիստոնեայ և մահմեդական վրացիները, կարծելով որ համառուսական յեղափոխութիւնն արդէն սկսված է, ձեռնարկել են վճռական գործողութիւնների: Այդ գաւառները բոլորովին կտրված են այժմ արտաքին աշխարհից. ոչ հեռագիր է տեղ հասնում, ոչ էլ գնացքներ կան, որ տեղեկութիւններ ստացվեն:

—

Թիֆլիսի ոստիկանապետ Դ. Ա. Ցիսը խնդիր է ներկայացրել, որ իրան հրաժարված համարեն ոստիկանապետի պաշտօնից: Նրա տեղ նշանակվում է Ախալցխայի գաւառապետ կապիտան Պօգգուբսկին: Ասում են, որ Թիֆլիսի գեն.-նահանգապետ գեներալ Ժիլեայը ևս հրաժարական է տուել իր պաշտօնից:

—

Հոկտեմբերի 22-ին կայացաւ Թիֆլիսի իրաւաբանական ընկերութեան նիստը, որը նուիրված էր Թիֆլիսում տեղի ունեցած վերջին դէպքերին: Ժողովում պարզվեց, որ ոստիկանական մի պաշտօնեայ երկու հայ փաստաբանների ասել է, թէ «լուրեր են պտտում, որ վրացիները յարձակվելու են հայերի վրա», իսկ վրացիներին ասել է, թէ «լուրեր են պտտում, որ հայերը յարձակվելու են վրացիների վրա»: Ժողովը որոշեց անյապաղ հեռագրել Պետերբուրգ կոմս Վիտտէին և բողոքել հոկտ. 22-ի արեան անմիտ բաղանիսի դէմ:

—

Հոկտեմբերի 15-ին Երևանի գիմնազիայի աշակերտները 10 օրով գործադուլ արին: Պատճառն այն է, որ թաղի պահակի օֆիցերը խիստ կոպտաբար խուզարկութեան է ենթարկել աշակերտներին և վիրաւորել: Գործադուլաւորները պահանջում են, որ այդ օֆիցերին հեռացնեն Երևանից:

—

Հոկտեմբերի 15-ի գիշերը դէպի Թիֆլիս կազակներ բերող գնացքը խորտակվել է Ղարաքիլիսի և Շահալիի միջավայրում՝ գիշերվայ ժամը 3-ին, ռէլսները հանած լինելու պատճառով: 8 վագօն բոլորովին կոտրատվել են: Սպանված է 5 կազակ, 5 էլ վիրաւորված. սպանված է 5 ձի:

—

Հոկտեմբերի 25-ին, 11 օրեայ գործադուլից յետոյ, սկսեց գործել Թիֆլիսի էլեքտրաքարշը: Գօլովինսկի պրօսպէկտի վրա էլեքտրաքարշը դեռ չէ բանում, որովհետև հոկտեմբերի 22-ի կարմիր օրը զինւորների գնդակները շատ տեղեր կտրատել են էլեքտրաթելերը:

—

Պետերբուրգի «Русь» և «Сынъ От.» լրագիրներում տպված է մի ընդարձակ հեռագիր Բագուի խուլիգանների և թուրքերի կատարած գազանութիւնների մասին Բագւում:

—

Հոկտեմբերի 19-ի գիշերը հրդեհը ոչնչացրել է Ցխինվալի գիւղի հրէական թաղի այն մնացորդները, որոնք մի կերպ ազատվել էին նախկին հրդեհից: Նախկին վնասվածների վրա աւելացել են 600 հոգի նորերը. դրանցից շատերը կրակից փախել ազատվել են միայն շապկանց: Կարիքը սարսափելի և աննկարագրելի է:

—

Հոկտեմբերի 21-ին Քութայիսից դէպի ապստամբ Գուրիա մեկնող զինւորական գնացքը խորտակվել է ռէլսները քանդած լինելու պատճառով: Սպանված են 8 զինւոր, ծանր վիրաւորվել են 27 հոգի, որոնց մէջ է և փոխ-գնդապետ Արազաձէն: Բռնված են 9 հոգի կասկածելի անձեր, 2 հոգի էլ սպանված են. դրանք փորձում էին լողալով անցնել Րիօն գետը և ազատվել:

—

Քութայիսի նահանգական դատարանի վրա զինված յարձակում է կատարվել հոկտեմբերի 17-ի առաւօտեան ժամը 4-ին: Պահապանները յետ են մղել յարձակումը, իսկ յարձակվողները փախել անյայտացել են:

—

Հոկտեմբերի 19-ին, ասում է «Кав.»-ը, Ալէքսանդրօպօլում, քաղաքի կենտրոնում 6 հոգի թիւրքահայ գաղթականներ ջանացին խառնակութիւն առաջ բերել քաղաքում: Նրանք ատրճանակ արձակեցին ժողովրդի վրա, սպանեցին մէկ կին և մի երեխայ և վիրաւորեցին մի քանի հոգու: Վրդովված ժողովուրդը սպանեց դրանցից 3-ին, իսկ միւսները փախան մի գինետուն, ուր՝ մի քիչ դիմադրելուց յետոյ, անձնատուր եղան ոստիկանութեանը: Ամբոխն աւերեց գինետունը: Վրա հասան զօրքերը և կարգը վերականգնեցին առանց զէնքի դիմելու:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Կ. Պօլսից «Temps» լրագրին հեռագրում են հոկտեմբերի 13-ից (ն. տ.). «Մարշալ Էդհէմ փաշայի մահվան, հազարաւոր հայերի բանտարկութեան, և մի քանի հարիւր հայերի կախաղան բարձրացրած լինելու և անգլիական դեսպանատան մէջ ռումբեր գտնվելու լուրերը չեն ստուգվում: Անգլիական դեսպանը շատ դժգոհ է օսմանեան կառավարութիւնից, որովհետև նա յամառում է գոհացում չը տալ անգլիական հպատակների գործերի վերաբերեալ մի քանի պահանջներին: Այդ դիմադրութիւնը, ասում են, արդիւնք է գերմանական ազդեցութեան: Այդ պատճառով անգլիական դեսպանը անորոշ ժամանակով յետաձգեց Միջերկրական ծովի անգլիական էսկադրայի ծովակալի պաշտօնական այցելութիւնը Կ. Պօլիս:

—«Courrier Européen»-ում կարդում ենք. «Ամենքին յայտնի է, թէ ինչ զգացումներ է տածում Իզմիրի վալի Ֆեհմի փաշան սուլթանի վերաբերմամբ: Նախկին Մեծ-Եպարքոսը, որ այժմ կատարելապէս շնորհազուրկ է իր տիրոջից, հակառակ սուլթանի կամքի, շնորհիւ անգլիական պաշտպանութեան, վարում է Թիւրքիայի ամենահարուստ կուսակալութեան պաշտօնը: Ֆեհմի փաշային աջողված է բացի անգլիական պաշտպանութիւնից՝ վայելել նաև մի զօրաւոր կուսակցութեան հովանաւորութիւնը: Ահա դրա համար է, որ Աբդուլ-Համիդը ստիպված է զգում իրան պահելու իր պաշտօնի մէջ Ֆեհմի փաշային:

ուլթանը մի քանի անգամներ փորձել է նը- ն բերել Կ. Պոլիս, մի քանի անգամ հրա- րել է նրան իր մօտ, բայց նախկին մեծ- վիրը՝ լաւ իմանալով՝ որ Կ. Պոլսում իրան ասում է նոյն ողբերգական բաղդը, որին թարկվեց յայտնի Միթհատ-փաշան, հրա- րվում է հեռանալ Իզմիրից, որտեղից նեղը ացած դէպքում, կարող է հեշտութեամբ ախչել իր հայրենիքը՝ Կիպրոս, նստելով մի նգլիական նաւ։ Այս հանգամանքը կատա- ցնում է սուլթանին, որ ամեն քայլ երկիւղ կրում, որ մի գուցէ Քեամիլ փաշա ապաս- անվի Կիպրոս և Թիւրքիայի դժգոհ տարրերը ր շուրջը հաւաքելով սկիզբ դնէ, ամենայն պահովութեամբ, հակահամիդական մի ագի- ացիայի։ Սակայն Քեամիլ փաշա՝ անուանա- էս միայն կառավարում է իր կուսակալու- իւնը։ Նահանգի իսկական տէրը իր որդին՝ այիդ-բէյն է, որ մի ժամանակ մեծ շնորհ ր վայելում սուլթանի պալատում, բայց վեր- րս բոլորովին վարկաբեկ լինելով՝ մինչև նգամ պալատում որոշ ժամանակ բանտարկ- եց և աքսորվեց շնորհիւ իր հօր անդադար պահանջներին և անգլիական կառավարու- եան միջամտութեան։ Սայիդ-բէյ վերադար- աւ Իզմիր։ Արդ, որովհետև Սայիդ բէյ իր ր ազդեցութեան միայն պարտական է իր իրքը, նա աշխատում է բնականաբար իր ամար ստեղծել մի հաստատ, անկախ դիրք։ Եւ դրա համար էլ նա դիմում է վարպետ աղերի։ Եւ եթէ նկատենք, որ Սայիդ բէյ ի- ան է վերագրում դաւադրութեան գիւտը և նքը անձամբ վարում է հարցաքննութիւնները, կարելի է եզրակացնել, որ Իզմիրի դէպքը նրա սարքած գործն է։ Նա այդ գործը տեղծեց, որպէս զի սուլթանի անձի դէմ կա- արված փորձի տագնապալի դրութիւնից օ- ուտ քաղէ, և սուլթանին հաճելի դառնալով վերահաստատէ իր քաղաքական դիրքը։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

25 հոկտեմբերի

ԵԼԻՍԱՎԵՏԳՐԱԴ։ Ազատված են քաղաքական բանտարկեալները։ Քաղաքում հանգիստ է։

ՕԴԵՍՍԱ։ Նաւահանգստում սկսվեցին աշխատութիւնները. նաւահանգստային երկաթուղին վերսկսեց իր գործունէութիւնը։ Գրեթէ բոլոր մագազինները և բանկերը փակված են։ Բօրսային կոմիտէտը հեռագրով խնդրեց ֆինանսների մինիստրին, ի նկատի ունենալով հրէական ջարդերը, յետաձգել պարտամուրհակների վճարումը, չը կրճատել առևտրականներին կրէդիտը Պետական Բանկում, թեթևացնել մասնաւոր բանկերին մուրհակների զեղջումը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մինիստրների կոմիտէտի նախագահ կոմս Վիտտէն Բարձրագոյն հրամանով նշանակված է մինիստրների խորհրդի նախագահ, թողնվելով միացած պաշտօններում։ Սեմինարիստներին համալսարանները ազատ մուտք տալու նպատակով Սինօդի աւագ-պրօկուրօրը հայթայթել է ժողովրդական լուսաւորութեան մինիստրին տեղեկութիւններ, որ հոգևոր դպրոցների և սեմինարիաների ծրագիրները ենթարկվեն վերաքննութեան և մշակվեն նոր ծրագիրների նախագծեր ու ներկայացնվեն Սինօդի հաստատութեան. այդ ծրագիրներով հոգևոր սեմինարիաների հանրակրթական ընթացքը բոլորովին մօտենում է գիմնազիականին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պաշտօնապէս։ Զանազան լրագիրներում տպված է բովանդակութիւնը այն խօսակցութեան, որ կոմս Վիտտէն ունեցել է զէմստվային և քաղաքային գործիչների համագումարների կազմակերպիչ բիւրօի անդամների—Օ. Գօլովինի, Օ. Կօկօշկինի և իշխան Լվօվի հետ։ Մենք լիազօրութիւն ունենք յայտնել, որ կոմս Վիտտէի և յիշեալ անձանց մէջ եղած խօսակցութիւնը, թիւրիմացութիւնների տեղիք չը տալու համար, ապագայում գրաւոր կերպով շարադրվեց և այդ բնագրի տպագրութեան համար կոմս Վիտտէն իր հաճութիւնը տուեց։ Տեղի ունեցած խօսակցութեան այդպիսի ճշգրիտ շարադրութիւնը տպված է «Рус. Вѣдомости» լրագրի 278, հոկտեմբերի 22-ի համարում։ Մի քանի լրագիրների, որոնց թւում և «Новое Время» լրագրի մէջ տպված յիշեալ խօսակցութեան մանրամասնութիւնները չեն համապատասխանում ճշմարտութեան։

ՀԵԼՍԻՆԳՖՕՐՍ։ Սենատի հրապարակում կայացած բանուորական ահագին միտինգը որոշեց դադարեցնել գործադուլը։ Սօցիալ-դէմօկրատները գոհ են մանիֆէստով և որոշեցին շարունակել կուսակցական նպատակների իրագործումը, որոնցից առաջինը ընդհանուր ընտրողական իրաւունքից յետոյ հանդիսանում է միապալատեան սիստեմը։ Քաղաքային կեանքը վերսկսվեց։ Լիակատար կարգ պահպանում են կազմակերպված բանուորները։ Զեռնարկված է քաղաքային ոստիկանութեան կազմ բանուորական պահակախմբի փոխարէն։ Մանիֆէստի լուրը ամբողջ երկրում ոգևորութիւն առաջ բերեց։ Գաւառից բազմաթիւ հեռագիրներ վկայում են անհուն ուրախութեան մասին։ Քաղաքը շքեղապէս լուսաւորված է։ Ընդհանուր-նահանգապետի մօտ առանձին յանձնարարութիւնների պաշտօնեայ Դիտրիխը հերքում է մի քանի լրագիրների լուրը, թէ իբր իշխանի տան մէջ գտնվել են պահպանութեան համար առանձին պատգամաւորներ։

ՎԱՐՇԱՎԱ։ Լեհաստանի շատ քաղաքներում տեղի ունեցան փառաւոր ժողովրդական թափօրներ։

ԼՕՆԴՕՆ։ Տղամարդկանց և կանանց ահագին խմբեր, երեխաներին գրկած, հաւաքվելով կէսօրին Տէմզի ափին, դիմեցին Բալֆուրին։ Առջևից երաժշտութիւնը նուագում էր մարսիլիէզ։ Ամբոխը առաջ էր շարժվում երեխաներով լի երկու սայլակներով։ Ընդունվելով Բալֆուրից, անգործների պատգամաւորները պահանջեցին պարլամենտի արտակարգ նիստի գումարումն անգործութեան հարցի մասին խորհրդակցելու։ Բալֆուր առարկեց, ցոյց տալով, որ անժամանակ է և յայտնեց, որ վերջին նստաշրջանի մշակած օրէնքները պէտք է թեթևացնեն անգործների դրութիւնը։

Կ. ՊՕԼԻՍ։ Վեց պետութիւններ, որոնք ֆինանսական կօմիսարներ ունեն Մակեդոնիայում, խորհրդակցում են Թիւրքիայի դէմ ծովային ցոյց անելու ձևի մասին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Կեանքը հետզհետէ մտնում է սովորական ընթացքի մէջ։ Այսօր վերսկսվում են զբաղմունքները բոլոր կրթական հաստատութիւնների մէջ։

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՎ, 25 հոկտեմբերի։ Գիշերը մեծ հրդեհներ են շատ տեղերում։ Քաղաքի ծայրերում ջարդը դադարեց։ Վնասվեց աղքատ դասակարգը։ Գնացքների երթևեկութիւնը վերսկսվեց։

ԲԱԹՈՒՄ, 25 հոկտեմբերի։ Շատ տեղերում հանված են ռէլսերը և կամուրջները։ Զինուորական գնացքը ամունիցիայով վերադարձաւ։ Փախստականների խօսքով Գուրիայում տեղի ունեն արիւնահեղ ընդհարումներ զօրքերի և ժողովրդի միջև։ Օզուրգէթի գաւառում ռումբերով սպանված են և վիրաւորված շատ կազակներ։ Բազմամարդ միտինգը Թաւրօնում պատգամաւորութիւն ուղարկեց գեներալ-նահանգապետին խնդրելով յետ կանչել զօրքերը Գուրիայից։ Խոստացված է այդ պահանջը ներկայացնել Փոխարքային։ Մինչև վճիռը ընդհանուր գործադուլ է յայտարարված։ Բոլորը փակված է։

ՊԱՐԻԶ, 25 հոկտեմբերի։ Օդէսսայից ստացվող բարենպաստ տեղեկութիւնների առիթով մամուլը նպաստաւոր տպաւորութիւն է արտայայտում։ «Դէբա» լրագիրը այն համոզմունքն է յայտնում, որ հանգստութիւնը կը տիրէ, անկարգութիւնները զրկված են ընդհանուր ազգային շարժման բնաւորութիւնից, Վիտտէն իր բոլոր գործողութիւններով վճռականութիւն է ցոյց տալիս գործել ազատամիտ ոգով, ուշադրութեան առնելով ազգի կարիքները և ցանկութիւնները։

ՆԻՒ ԻՕՐԿ, 25 հոկտեմբերի։ Երէկ վճռվեց բողոքի միտինգ սարքել Ռուսաստանի դէպքերի դէմ։ Լուրերի համեմատ, հեռագիր է ուղարկված Րուզվէլտին՝ խնդրելով բարեկամական առաջադրութիւն անել Ռուսաստանին։ Հեռագիրներ են ուղարկված Լօնդօն՝ Րօտշիլդին և Մօնտէֆիօրէին, խնդրելով, որ այդ բանում աջակցութիւն ցոյց տրվի բրիտանական կառավարութեան կողմից։

ԼՕՆԴՕՆ, 25 հոկտեմբերի։ Եապօնիայի հետ դաշնակցութիւն կապելու առիթով բանկէտում Լանսդօուն ճառ արտասանեց, մատնացոյց անելով անկուսակցականութեան անհրաժեշտութեան վրա արտաքին քաղաքականութեան մէջ, որը անհրաժեշտ է վարել անընդհատ մի ուղղութեամբ։ «Մինչև անգամ,—ասեց Լանսդօունը,—Մեծ Բրիտանիան կարող է պարծենալ դաշնակցութեամբ Եապօնիայի հետ, որի մէջ չը կան ծածուկ շարժառիթներ, գաղտնի պարագրաֆներ և դաւադրութիւն ուրիշ ազգերի դէմ։ Դաշնակցութեան գլխաւոր նպատակն է խաղաղութեան պահպանութիւնը, երկրորդ նպատակն է—Չինաստանի անձեռնմխելիութիւնը և բաց դռները, երրորդ խընդիրն է—փոխադարձ պաշտպանութիւնը յարձակումներից։ Ֆրանսիայի հետ համաձայնութիւնը նոյնպէս չէ խախտում ուրիշ երկիրների իրաւունքները։ Բողոքելով այն ենթադրութեան դէմ, որ իբր թէ այդ համաձայնութիւնները կարող են խրտնեցնել ուրիշ պետութիւններին, Լանսդօուն յայտնեց, որ Մեծ-Բրիտանիան պատրաստ է նոյնանման համաձայնութիւն կապել ամեն մի պետութեան հետ այն պայմանով, որ դրանով վնաս չը հասնի անգլօ-եապօնական բարեկամութեանը։

ՊՐԱԳԱ, 25 հոկտեմբերի։ Սօցիալ-դէմօկրատական կուսակցութեան կօմիտէտը որոշեց յարաբերութիւն հաստատել կայսրութեան բոլոր բանուորական կազմակերպութիւնների հետ և մշակել ընդհանուր գործադուլի պլանը հարկաւոր դէպքում։ Բանուորները գոհ են երկաթուղիական ծառայողների օբստրուկցիայով։ Նորից տեղի ունեցան ցոյցեր քաղաքում։ Ժողովրդի խմբերը երգելով անցան փողոցներով։ Գերմանական մարմնամարզական դահլիճում ջարդված են պատուհանները։ Զօրքերը և ժանդարմները մաքրում էին փողոցները։ Ժիժգօվ արուարձանում զինուորական ուժը ցրեց ամբոխը, որը պաշարել էր ոստիկանական բիւրօն։ Անչափահասները բարրիկադներ էին սարքում։ Ոստիկանութեան և զօրքերի վրա քարեր էին արձակում։ Երեկոյեան ամեն ինչ հանդարտացաւ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 հոկտեմբերի։ Դիվիդենդները լաւացան, ֆօնդերը խաղաղ են, խաղարկութեան տոմսակների հետ հանգիստ։ Նոր $4^1/_2$ տոկոսային փոխառութիւնը 96 և չորս ութերորդական, ռէնտան—$87^3/_8$, Նոր ներքին խաղարկութեան փոխառութիւն—$451^1/_2$, երկրորդ փոխառութիւն—346, երրորդ փոխառութիւն 280, Հարաւ Արևելեան—132, պուտիլօվեան—$116^1/_2$, Մօսկ. վինդ. ձկն.—142, Մանթաշեանինը—190, չինականները—255, Նոր ներքին $5^0/_0$ փոխառութիւն—$100^1/_2$։

ՎԱՇԻՆԳՏՕՆ, 25 հոկտեմբերի։ Համաձայն Րուզվէլտի վճռի, կառավարութիւնը ներկայումս ոչինչ միջոցներ ձեռք չի առնի ի նպաստ Ռուսաստանի հրէաների։ Կոմս Վիտտէն, պատասխանելով այստեղի ֆինանսական շրջանների հարցապնդումին հրէական անկարգութիւնների առիթով, հեռագրով հաղորդեց, որ ռուսաց կառավարութիւնը սարսափով է վերաբերվում հրէաների դէմ կատարված յանցանքներին։ «Ձեզ յայտնի է,—հեռագրեց Վիտտէն,—որ ես չեմ համակրում վայրենի կամքի այդպիսի արտայայտութիւններին։ Ամեն բան արված է, ինչ որ ես կարող էի անել, վերջ դնելու համար անկարգութիւններին, բայց տեղական ադմինիստրացիան յաճախ անզօր էր գտնվում»։

ԵԿԱՏԵՐԻՆԲՈՒՐԳ, 25 հոկտեմբերի։ Քաղաքը բնական կերպարանք է ընդունում։ Եկաւ և ուղարկվեց Պետերբուրգի պօստը։

28 հոկտեմբերի

ՄՕՍԿՎԱ, 25 հոկտեմբերի։ Մօսկվայի քաղաքագլուխը մի յայտարարութեամբ հրաւիրում է Մօսկվայի քաղաքացիներին հանգստանալ և վերսկսել խաղաղ կեանքը։ Ոստիկանութիւնը կը պաշտպանէ բնակիչներին բռնութիւններից։ Դատաստանական պալատի պրօկուրօրը հաղորդում է, որ քննութիւններ են կատարվում սպանութիւնների և մարմնական վնասուածքների այն բոլոր դէպքերի մասին, որոնք հասել են պրօկուրօրի ականջին։

ԵԿԱՏԵՐԻՆԲՈՒՐԳ, 25 հոկտեմբերի։ Գաւառական զէմստվօի ժողովը, ինժեներների համառուսական դաշնակցութեան Խարկովի բաժնի առաջարկութեամբ, որոշեց կոչ անել տեղական բնակիչներին, որ նրանք ցոյցեր չանեն և և աջակցութիւն ցոյց տան սպասվելիք անկարգութիւններին վերջ տալու համար։

ԿԱՏՕՎԻՑ, 25 հոկտեմբերի։ Կատօվիցեան երկաթուղու վարչութիւնը յայտնում է ի գիտութիւն ընդհանուրի, որ այսօր վերսկսվեց երթևեկութիւնը։ Կատօվիցում ընդունվում են բեռներ տրանզիտային ճանապարհով Պօդվօլօչիսկի վրայով ուղարկելու համար։

ԼՕՆԴՕՆ, 25 հոկտեմբերի։ «Տայմս» լրագրում տպված է Պետերբուրգից վերադարձած մի անձի նամակը, որի մէջ ասված է, որ, ի հարկէ, չէ կարելի իմանալ թէ արդեօք կաջողվի կոմս Վիտտէին յաղթել յետադէմ կուսակցութիւնը և իրան թշնամի բիւրօկրատիային, բայց անկասկած է, որ կոմս Վիտտէն օժտված է աչքի ընկնող ընդունակութիւններով և եռանդով և նա միայն կարող է դէմ առ դէմ կանգնել Ռուսաստանի ներկայ դրութեան դժուարութիւնների առաջ, նա միայն կարող է վերականգնել հանգստութիւնը Ռուսաստանում և պաշտպանել արևմտեան Եւրօպայի շահերը, որը իր խնայողութիւնների միլիարդները դրել է Ռուսաստանի արժէթղթերի մէջ։ Եթէ Վիտտէն հեռանայ իր պաշտօնից, անիշխանութիւնը անխուսափելի կը լինի։

ՏՕԿԻՕ, 25 հոկտեմբերի։ Ռուսական գերիների առաջին խումբը կուղևորվի Կօբէից նոյեմբերի վերջում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 հոկտեմբերի։ Երէկ հրդեհ բռնկվեց զօրքի և նաւատորմի օֆիցէրական ժողովարանի շինութեան մէջ։ Եկողների համար սենեակները և Տնտեսական Ընկերութեան մագազինի շատ բաժանմունքները լցված են ջրով։ Վնասները 90,000 րուբլուց աւելի են։

ՌԻԳԱ, 25 հոկտեմբերի։ Ռիգա-Օրլօվեան երկաթուղու գլխաւորը տեղական լրագիրներում յայտարարութիւն տպեց, որով հրաւիրում է նոր ծառայողներ, երկաթուղու բոլոր ագէնտներին արձակելու պատճառով, որոնք չը սկսեցին կատարել իրանց պարտաւորութիւնները երէկվայ նախազգուշացման համաձայն։ Երկաթուղին չէ գործում։

ԿԱԼԻՇ, 25 հոկտեմբերի։ Շահագրգռված անձինք հարց են յարուցանում, թէ ով պէտք է հատուցանէ երկաթուղիական գործադուլից պատճառած վնասները մասնաւոր անձանց։ Մշակվում է մի պէտիցիա ներկայացնելու կառավարութեանը, որ դատարանի միջոցով պահանջվեն վնասները երկաթուղիական գործադուլային կոմիտէտներից և գործադուլի ղեկավարներից։

ՕԴԷՍՍԱ, 25 հոկտեմբերի։ Դուման վճռեց յանձնաժողով կազմել որոշելու համար վնասվածներին և միջնորդել, որ դատաստանական հալածանք սկսվի մեղաւորների դէմ։—Որոշվեց տալ 250,000 ր, վնասվածներին և 100,000 ր. քաղաքային շինութիւնները պաշտպանելու համար։ Առևտրի ներկայացուցիչների խորհրդակցութիւնը որոշեց դիմել երկաթուղիներին և շոգենաւային ընկերութիւններին, խնդրելով ընդունել բեռներ միայն ուղարկողների անձնաւորութիւնը ստուգելուց յետոյ, կոմիտէտ կազմել կրեդիտ տալու համար վնասված ֆիրմաներին։ Այսօր թաղում են 200 ճանաչվածների դիակները։

ՌԻԳԱ, 25 հոկտեմբերի, Օրը հանգիստ անցաւ։ Ուսանողական ինքնապաշտպանութիւնը հերթապահութիւն է անում հրէական արուարձանում։

ԻՐԿՈՒՏՍԿ, 25 հոկտեմբերի։ Կատարեալ հանգստութիւն է։ Վերսկսվեց երկաթուղիական հաղորդակցութիւնը Ռուսաստանի հետ։

ՄՕՍԿՎԱ, 25 հոկտեմբերի։ Դուման մերժեց բոլորի մեծամասնութեամբ տասը ձայնի դէմ միլիցիայի հաստատութիւնը։ Վերադարձան դումայի պատւիրակները կոմս Վիտտէից, որը խոստացել է ամեն միջոցներ գործ դնել խաղաղացնելու համար։

ՄԻՆՍԿ, 25 հոկտեմբերի։ Ազատված են 16 քաղաքական յանցաւորներ։ Վերսկսվում է «Сѣверо-Западный Край» լրագրի հրատարակութիւնը նախկին աշխատակիցներով։

ՆԱՐՎԱ, 26 հոկտեմբերի։ Կտաւ մանելու գործարանի գործադուլից յետոյ գործադուլ արին Կրէնգէլմեան մահուդային մանուֆակտուրան և Զինօվիեվ թուջաձուլարանի և փայտա-սղոցային գործարանները։

ԵԼԻՍԱՒԵՏԳՐԱԴ, 26 հոկտեմբերի։ Ընտրված է վնասվածներին օգնելու կոմիտէտ։ Մագազինները բացված են։ Քաղաքը հանգստանում է։

ՆՕՎՕՐՕՍԻՍԿ, 26 հոկտեմբերի։ Պատերին կպցրված է [illegible] կոչը կամայականութեան և բռնութիւնների դէմ։

ՊԱՐԻԶ, 26 հոկտեմբերի։ Կազմվեց ջարդերից վնասված ռուսական հրէաներին օգնող կոմիտէտ։ Մինիստրների խորհուրդը որոշեց նշանակել մասնակի ընտրութիւններ սենատի համար։ Ֆրանս-ռուսական դաշնագրի քննութիւնը յետաձգված է։ Յանձնաժողովի անդամների մեծամասնութիւնը զիջումները անբաւարար է համարում, սակայն սպասում են, որ կընդունվեն։

ԼՕՆԴՕՆ, 26 հոկտեմբերի։ Կազմվեց Ռուսաստանում տեղի ունեցող հրէական ջարդերի զոհերին օգնող կոմիտէտ։

ՎԱՐՇԱՎԱ, 26 հոկտեմբերի։ Ընդհանուր գործադուլից յետոյ երէկ առաջին անգամ երևացին կառապանները։ Այսօր բացված են խանութները։ Պրիվիսլեանսկիի և Վարշավա-Վիէննայի երկաթուղիական գծերի վրա երթևեկութիւն չէ վերսկսվել։ Ձիաքարշները, տելէֆօնները, դեղատները առ այժմ չեն գործում։

ՊԷՆԶԱ, 26 հոկտեմբերի։ Գործադուլի պատճառով դադարած Րեաժսկ-Րուզաեվկա-Րտիշչեվօ մարդատար երկաթուղու երթևեկութիւնը վերսկսվեց։

ՎԼԱԴԻՄԻՐ, 26 հոկտեմբերի։ Դուման միաձայն խնդրում է պրօկուրօրին, որ դռնբաց քննվի ջարդը դումայի ներկայացուցիչների մասնակցութեամբ։ Կիրակի ժողովրդական տան մէջ կայացաւ միտինգ, որը հանգիստ անցաւ։

ՏՕԿԻՕ, 26 հոկտեմբերի։ Նիպօն կղզու արևելեան մասի պրէֆէկտուրներում սով է տիրում։ Սովատանջ է միլիօնաւոր երկրագործ ազգաբնակութիւնը։

ՇԱՆԳՀԱՅ, 26 հոկտեմբերի։ Նոյեմբերի 18-ին սկսվում է եապօնական զօրքի գլխաւոր շտաբի վերադարձը դէպի հայրենիք։ Մարշալ Օյաման սպասվում է Տօկիօ դեկտեմբերի 3-ին։

ԿՈՊԷՆՀԱԳԷՆ, 26 հոկտեմբերի։ Տօրնէնից Հէլսինգֆօրս հասաւ մի գնացք այն ֆինլեանդացիներով, որոնք առաջ աքսորված էին երկրից և վերադառնում էին հայրենիք։ Տօրնէօում նրանց ողջունում էին ամբոխները կարմիր դրօշակներով։

ՆԻՒ-ԵՕՐԿ, 26 հոկտեմբերի։ Կոմիտէ է կազմված նուիրատւութիւն հաւաքելու համար ի նպաստ Ռուսաստանի ջարդերից վնասված հրէաների։ Լօնդօնից, Պարիզից, Բերլինից հեռագիրներ են ստացված, որոնց մէջ ցանկութիւն է յայտնվում միջազգային ընկերութիւն կազմել ի նպաստ ջարդից վնասված հրէաների։ Նպաստների բաշխումը ենթադրվում է բրիտանական դիպլօմատիական ներկայացուցիչների միջոցով։

ՀԷԼՍԻՆԳՖՕՐՍ, 26 հոկտեմբերի։ Երէկ վերսկսվեցին պարապմունքները և դասախօսութիւնները համալսարանում։ Պօլիտէխնիական ինստիտուտի ուսանողները որոշեցին ծանուցանել խորհրդին, որ իրանք վերջ են տուել գործադուլին։ Բոլոր դպրոցները երէկ վերսկսեցին գործունէութիւնը։

ՎԻՆԴԱՎԱ, 26 հոկտեմբերի։ Կազմակերպվում է ինքնապաշտպանութիւն, բաղկացած հասարակութեան բոլոր խաւերի ներկայացուցիչներից՝ կեանքը և գոյքը պաշտպանելու համար։

ԻՇԻԺ, 26 հոկտեմբերի։ Ուպրավայի հրաւէրով երէկ հրապարակի վրա աշակերտների, աշակերտնուհիների և բազմաթիւ հասարակութեան ներկայութեամբ մաղթանք կատարվեց մանիֆէստի առիթով, ապա հասարակութեան պահանջով հոգեհանգիստ կատարվեց ի յիշատակ ազատութեան համար ընկած մարտնչողների։ Հասարակութիւնը երգեց «յաւիտենական յիշատակ» և «Տէր կեցո զԿայսրն»։

ԿԷԼՑԻ, 26 հոկտեմբերի։ Նորակոչների վիճակահանութիւնը անցնում է կատարեալ հանգստութեամբ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 հոկտեմբերի։ Դիվիդէնդները դանդաղ են, անգործունեայ։ Ֆօնդերը և խաղարկութեան տոմսակները խաղաղ։ Նոր 4 և կէս տոկոսային փոխառութիւն—96 և մէկ ութերորդական, ռէնտան—84 և մի քառորդ։ Առաջին ներքին խաղարկութեան փոխառութիւնը—450 և կէս, երկրորդ փոխառութիւնը—246, երրորդ փոխառութիւնը—277 և կէս։ Վօլժսկօ—Կամսկիինը—875, Հարաւ-Արևելեանը—131, Մօսկ.—Վինդ. Ռիբ.—141, Մանթաշեանինը—192, չինականները—257, Նոր ներքին 5% փոխառութիւն—100 և կէս։

ՊՐԱԳԱ, 26 հոկտեմբերի։ Այսօր կարգը չը խախտվեց. երեկոյեան 10 ժամին սաստկացրած պահպանութիւնը հեռացրվեց։

ՌԱՇՏ, 26 հոկտեմբերի։ Ճիշդ չէ Էնզէլիից ստացված այն տեղեկութիւնը, որ իբր թէ հիւսիսային Պարսկաստանում հոգևորականութեան ազդեցութեան տակ պարսիկները բօյկօտի են ենթարկում հայերին։ Պարսիկների վերաբերմունքը դէպի հայերը շատ լաւ է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 հոկտեմբերի։ Ֆինանսների մինիստր Կօկօվցէվ նշանակված է Պետական Խորհրդի անդամ, թողնելով նրան ստատս-սեկրետարի և սենատօրի կոչումները։

ՄՕՍԿՎԱ, 25 հոկտեմբերի։ Նոյեմբերի 6-ին հրաւիրվում է Մօսկվայում զէմստվօների և քաղաքային գործիչների համաժողով։ Պատրաստականութիւն է յայտնվում ամեն տեսակ աջակցութիւն ցոյց տալ կոմս Վիտտէին պետական ռէֆօրմներն իրագործելու գործում։

ՏԱՇԿԷՆՏ, 25 հոկտեմբերի։ Գործադուլը վերջանալուն մօտենում է։ Խանութները բացված են։ Քաղաքում կատարեալ հանգստութիւն է։

ՀԷԼՍԻՆԳՖՕՐՍ, 25 հոկտեմբերի։ Ճիշդ չէ այն տեղեկութիւնը, որ Հէլսինգֆօրսում սկսել են ընտրել ժամանակաւոր կառավարութեան անդամներ։ Ընտրութիւններ յիրաւի տեղի ունէին, բայց ընտրվում էին սենատօրների թեկնածուներ պաշտօնաթողների տեղ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 հոկտեմբերի։ Պաշտօնական։ Կառավարչական հաղորդագրութիւն։ Վերջին ժամանակներս տեղի ունեցող դէպքերի առիթով լրագիրներում երևացին յօդուածներ, որոնք խախտում են զինուորական իշխանութեան հեղինակութիւնը և կարող են թշնամական վերաբերմունք ներշնչել ազգաբնակութեանը դէպի առանձին զօրամասերը, այն ինչ զինուորական դիսցիպլինայի կարգը արգելում է զինուորական պաշտօնեաներին լրագրական վիճաբանութիւն սկսել, թէկուզ որպէս պատասխան վիրաւորական մեղադրանքի։ Այդ պատճառով անհրաժեշտ է դառնում մատնացոյց անել մինչև այժմ լրագիրներում երևացող տեղեկութիւնների միակողմանիութեան վրա և վերացնել մի քանի լրագրական յօդուածների հիմնական մտքի անկանոնութիւնը։ Զօրքը չէ կարող և չը պէտք է ներշնչված լինի այս կամ այն կուսակցութեան ոգով։ Հասարակական և պետական կարգը պաշտպանելու իր դժուար խնդրի մէջ նա ղեկավարվում է զինուորական դիսցիպլինայի պահանջով, անձնուիրութեամբ գահին և հայրենասիրական պարտքով։ Ակներև է, թէ այդ դէպքում որքան ծանր է զինուորականների դրութիւնը, որոնք պարտաւոր են գործել չափազանց զգուշութեամբ, չենթարկվելով անձնական զայրոյթի շատ բնական և հասկանալի զգացմունքին։ Հնարաւոր են, ի հարկէ, դրանից շեղվելու առանձին դէպքեր շրջապատող անձանց գրգռիչ կամ ուղղակի թշնամական վերաբերմունքից, սակայն բացասական հանգամանքները, որոնց ժամանակ տեղի են ունենում այդպիսի դէպքերը, առանձին զգուշութիւն են պահանջում նրանց մասին դատողութիւններ անելու ժամանակ։ Կասկած չը կայ, որ զօրքը չէ կարող դուրս մնալ հոկտեմբերի 17-ի Բարձրագոյն մանիֆէստով պետական կեանքի կազմի մէջ մտցրված նոր սկզբունքների ազդեցութիւնից։ Սակայն, դրանից չէ կարելի հետևցնել, որ երբ և իցէ զօրքերը կարող են գործել ոչ թէ իշխանութեան ցուցմունքով և իրանց տուած երդման համաձայն, այլ համակերպվելով իրանց գործողութիւնների հնարաւոր գնահատութեան հետ ազգաբնակութեան առանձին խմբերի կողմից։ Արդարութիւնը պահանջում է խոստովանել, որ զօրքերը անձնուրացութեամբ կատարում են այն խնդիրը, որը բոլոր պետութիւններում ամենադժուարն է համարվում, այն է ներքին անկարգութիւնների ճնշումը, և որ հէնց դրանով նրանք արդէն բազմիցս ազգաբնակութեան թշնամական մասերի միջև տեղի ունեցող ընդհարումների առաջն են առել։ Զօրքերի գործունէութեան նշանակութեան ընդհանուր գնահատութեան մէջ տարաձայնութիւն չը կայ բարձր զինուորական և քաղաքացիական վարչութեան կազմի մէջ։ Հանգիստ և անկողմնապահ վերաբերմունքը դէպի գործը անկասկած հասարակութեան կը համոզէ, որ զօրքերը ծառայութիւններ են մատուցանում երկրի խաղաղացման գործում։ (Տրված է կոմս Վիտտէի կարգադրութեամբ)։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 հոկտ. Պաշտօնական։ Բարձրագոյն մանիֆէստ. Վերջնականապէս քննելով Ֆինլանդիայի սէյմական գործիչների պետիցիան, 1904 թւի դեկտեմբերի 31-ին գրված, երկրում օրինական կարգերի վերահաստատման միջոցների մասին, Մենք գտանք նրանց Մեր ուշադրութեան արժանի և իրականացման ենթակայ։ Դրա հետ միասին իբր զարգացում ֆիննական ժողովրդի հիմնական օրէնքների՝ Մենք Բարձրագոյն հրամայում ենք նախագիծ կազմել ժողովրդից ընտրվածներին յանձնելու բարեփոխումների կարևոր կէտերը։ Այդ պատճառով Մենք հրամայում ենք դադարեցնել Մեր 1899 թւի 3/15 փետրվարի մանիֆէստի հիմնական օրէնքների գործադրութիւնները, մինչև որ այդ օրէնքների շօշափած հարցերը օրէնսդրական կարգով կը հաստատվեն, և վերացնել 1903 թւի ապրիլի 2-ի որոշումը պետական կարգի և հասարակական հանգստութեան պահպանման մասին և 1903 թւի նոյեմբերի 10-ի հրամանները, որոնցով ժանդարմների մի յատուկ կորպուսի տրված է պաշտօնավարութեան իրաւունք Ֆինլանդական Մեծ Դքսութեան մէջ, 1902 թւի սեպտ. 8-ի որոշումը Ֆինլանդական Սէնատի մի քանի հիմնարկութիւնների փոփոխութեան մասին, նոյն թւի կարգադրութիւնը գեն.-նահանգապետի իրաւունքների ընդլայնման մասին և 1903 թւի մարտի 26-ի որոշումը ֆինլանդական գեն.-նահանգապետի և նրա օգնական հրահանգը հաստատելու մասին, նոյնպէս և նոյն թւիս արված որոշումը նահանգապետներին տրված հրահանգների փոփոխութեան մասին և 1901 թւի յուլիսի 12-ի զինուորագրական օրէնսգրութիւնը, 1902 թւի յուլիսի 31-ի որոշումը մի քանի օրէնքների փոփոխութեան մասին, որ վերաբերվում են բաչքացիական պաշտօնէութեանը Ֆինլանդիայում, 1902 թւի օգոստոսի 14-ի որոշումը վարչական պաշտօնեաների պաշտօնից հեռացնելու մասին, նոյն թւի որոշումը պաշտօնեաներին դատի ենթարկելու մասին և 1900 թւի յուլիսի 2-ի որոշումը։ Բացի դրանից մենք բարւոք համարեցինք Բարձրագոյն յանձնել սէնատին. 1) Նախագիծ կազմել սէյմի նոր օրէնսդրութեան՝ ժամանակակից վարչութեան գաղափարներով և ֆիննական ժողովրդի ներկայացուցչութեան կազմի ոգու համաձայն՝ գործադրելով ընդհանուր և հաւասար ընտրողական սկզբունքը։ 2) Մշակում հիմնական օրէնքների ժողովրդին խօսքի, ժողովների և դաշնակցութիւնների ազատութիւն տալու վերաբերմամբ և 3) Կազմել մամուլի ազատութեան մասին օրինագիծ և անյապաղ յայտարարել ոչնչացում նախնական ցէնզուրայի։ Այդ նախագծերը, որոնց մի քանիսի նախնական աշխատանքներն արդէն կատարված են, Մենք սպասում ենք այնքան շուտափոյթ, որ կարողանանք ներկայացնել այն արտակարգ սէյմին, որ գումարման հրամանը սրա հետ միասին տալիս ենք։ Մենք հաստատ յոյս ենք տածում, որ Մեր նախագծած միջոցները, որոնք դրդված են Ֆինլանդիային բարիք ցանկալուց, կը ծառայեն ֆին ժողովրդին իր Միապետի հետ միացնող կապերն ամրացնելուն։ «ՆԻԿՕԼԱ»։ Պետերհօֆ, 22 հոկտ. 1905 թ։ Մինիստր պետական-քարտուղար Լինդէր։

ՏՕՄՍԿ, 25 հոկտ։ Երկրորդ օրն է խաղաղութիւն է։ Հաստատութիւններում պարապմունքները վերսկսվեցին։ Խանութները բաց են։ Լրագիրները լոյս տեսան։ Քննութիւն է սկսված երկաթուղու վարչութեան հրդեհի գործի առիթով։ Երկաթուղու շարժումը վերսկսվեց։

ՔՈՒԹԱՅԻՍ, 24 հոկտ։ Տաճարում հոկտ. 23-ին կատարվեց մանիֆէստը ռուս լեզուով։ Լուրեր են լսվում, որ Օզուրգէթի շրջանում զօրքերը կորուստներ են ունեցել և պաշտօնեաներ են կոտորված։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Կայսերական Թատրոնների արտիստ Լ. Դօնսկօյի անտրպրէզ
Ուրբաթ, հոկտեմբերի 28-ին
կը ներկայացվի
Ա Ի Դ Ա
օպերա 4 գործ. 7 պատ. երաժ. Վերդի Թարգ. Օլքազարայի։
Մասնակցում են ա.ա. Դուբրօվսկայա, Կարբէ, պ.պ. Դօնսկօյ, Սօկօլսկօյ, Դրակուլի, Տօմաշեվիչ Վօլսկի։
Պարերը կը դնէ բալէտմէյստր պ. Բեկեֆի։
Սկիզբը երեկոյեան ժամը 8-ին։
Տեղերի գները սովորական են։

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ

Բ. Նաւասարդեան

Վերադարձաւ և ստանձնելով իր «ԱՌԱՋԻՆ Մ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԸ», վերսկսեց բժշկական գործունէութիւնը։ 12—20

Օրիորդ կամ Պարոն

որ մտադիր է իբրև ուսանող Բեռլինում ապրել, կարող է մեր ընտանեկան յարկում պանսիօն ստանալ և շուտով վարժվել գերմաներէն լեզուին։ Տեղեկութիւնների համար դիմել ուղղակի.—Berlin, Friedenau Cranachstrasse 12, Ingenieur N. Antréassian. 2-5

Ղարասուբազարի

հայոց եկեղեցու համար հարկաւոր է մի ձայնաւոր և գործին հմուտ տիրացու։ Պայմանների մասին դիմել՝ Карасубазаръ (Таврич. губ.) Армянскому священнику Гарегинъ Асрянцъ. 2—5

Վերին-Ագուլիսի հայոց ուսումնարանների համար հրաւիրում են երեք ուսուցիչ—ռուսերէնի, հայերէնի և Թուաբանութեան—և մի վարժուհի ռուսերէնի համար. ցանկալի է, որ վարժուհին լինէր ուսուցիչներից մէկի ամուսինը. դասերի թիւը մինչև 25. ուսուցիչների ռոճիկը 500-ական ր., վարժուհունը 600 ր., տրվում է բնակարան։ Դիմել Թիֆլիս պ. Լևոն Սարգսեանի (Чавчавадзеевская № 12, «Մուրճ»-ի խմբ.)։ Ն 1—3

Մի հայ օրիորդ, որ աւարտել է ռուսաց բարեգործական ընկերութեան դպրոցը, ցանկանում է գանձապահի (կասսիրշա) կամ գործակատարուհու պաշտօն վարել։
Հասցէ. Сиротскій судъ («Մշակի» խմբագրութեան մօտ) Բերինեան։ 1—2

Հաւլաբարի Շամքորեցոց ս. Աստուածածնի եկեղեցու ծխական դպրոցը վերաբացվելով՝ հոկտեմբերի 18 ից սկսվում է աշակերտների և աշակերտուհիների ընդունելութիւնը։ Առայժմ բացվում է միայն առաջին բաժանմունքը։
Նախագահ հոգաբարձութեան՝
Իսահակ Յարութիւնեան

ԸՆԴՈՒՆՎՈՒՄ Է

ինտելիգէնտ ընտանիքում (Գրիբօեդօվսկի փ.)
Մ Ի Գ Ի Շ Ե Ր Օ Թ Ի Կ
Դիմել «Մշակի» խմբագրատուն. առաւ. 10-ից մինչև ժամը 3-ը։ 5—5

ՀԱՅ ուսուցչական ընկերական միութեան կանոնադրութիւն մշակող Մասնաժողովը՝ համաձայն ուսուցչական ժողովի յանձնարարութեան յայտնում է պ.պ. հոգաբարձուներին, որ պատրաստ է առաջարկել ուսուցիչներ և ուսուցչուհիներ հայ եկեղ.—ծխ. դպրոցների համար։ Դիմել՝ Հայ ուսուցչական ընկերական Միութեան ժամանակաւոր Մասնաժողովին կամ՝ Тифлисъ—Временная Армянская учительская комиссія. Ограда Ванкскаго Собора. 3—5

ԼՅՈՍ ՏԵՍԱՒ «ՄՈՒՐՃ» ԱՄՍԱԳՐԻ № 9-ըդը.—ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. Խաղ (պատկերներ գիւղից), Վ. Փափազեանի, 2. Իմ սէրը, Պետեօֆիից, Թարգմ. Ալ. Ծատուրեանի, 3. Դու կը հանգչնես իսկ ես կը վառեմ, Իւհանի Ահօ-ի Թարգմ. տիկին Մ. Մ.—Բ., 4. Տնտեսական զարգացման փազերը, Բ. Իշխանեանի, 5. Ովքեր են Թուրքերը և ովքերից են բաղկացած, Հիւսէյն Զադէի, Թարգմ. Տ. Զաւէն. 6. Ռ. Պատկանեանի նամակները, 7. Հիւանդ մարդը, Շտերնի, Թարգմ. Լ. Բաբայեանի, 8. Զպատմուած իրականութիւններ, Ֆարհատի. 9. Անցեալի հարցերից, Լէօի, 10 Ընդհարումների վայրերից, 11. Ժողովրդային սկզբնական ուսուցումը Անգլիայում, Պորիէտ, 12. Օրէլէնները, վէպ Ռընէ Բազէնի, 13. Քննադատութիւն և մատենախօսութիւն.—1) М. А. Миропіевъ «О положеніи русскихъ инородцевъ». Լ. Ս.-ի. 2) Կլարա Ցետկին՝ «Կինը եւ նրա տնտեսական դրութիւնը», Տ.Ց.-ի.—3) Մ. Տէր-Սարգսեան՝ «Իմ արկածները» Տ.Ց.-ի.—4) Պրոֆ. Վերներ Զոմբարտ՝ «Թէ ինչու մեր օրերում ամենքին հետաքրքրում են տնտեսական եւ սոցիալ-ղաքական հարցեր», Տ. Ց.-ի—5) Յարութիւն Եսայեան՝ «Միւնոյն դագաղում», Տ. Ց.-ի.—6) Փառնակէս՝ «Ջուտողի մալը ուտողին հալալ ա» կամ «Ճարպիկ փաստաբան» Տ. Ց.-ի, 14. Նոր ստացուած գրքեր։

15. Ներքին տեսութիւն.—Վրացիների վերաբերմունքը դէպի մեզ Թուրք-հայկական ընդհարումների ժամանակ.—Ազգային եւ դասակարգային երեւոյթներ.—Նացիօնալ եւ Նացիօնալիստական զգացմունք.—Հայ «կոմիտետների» մասին.—Պանիսլամիզմը եւ պանթիւրքիզմը.—Ընդհանուր ռեֆորմներ, անդրկովկասեան ներկայացուցչական ժողով եւ հայա-վրացա-թուրքական համագումարի անհրաժեշտութիւն—† Իշխ. Ս. Ն. Տրուբեցկոյ.—Բագուի արդիւնագործների ներկայացուցիչները Պետերբուրգում.—Բագուի բանուորների զեկուցագիրը Լ. Ս.։

16. Արտաքին տեսութիւն.—Լ. Ս., 17, Պարբերական հրատարակութիւններ, 18. Յայտարարութիւններ, 19. Յաւելուած. Ջէյմս Մորիէր՝ «Հաջի Բաբան Անգլիայում», վէպ պարսկերէնից, Թարգմ. անգլ. Մ. Կարապետեանի։ 129—143

Երեկոյեան կուրսեր մայրերի եւ Դաստիարակչուհիների համար

Ս. Վ. Արղութեան-Երկայնաբազուկի

Թիֆլիս, Սօլօլակ։ Պասկեվիչի փողոց № 13։ Մէկ տարվայ դասընթաց։

Աւանդելի առարկաներն են. մանկական հասակի ֆիզիօլոգիայի և առողջապահութեան հիմքերը։ Ամենօրեայ կեանքի քիմիա։ Ֆիզիկա, կենդանաբանութիւն և բուսաբանութիւն։ Մանկական հասակի հոգեբանութիւն։ Մանկական պարտէզի տեսական և գործնական զբաղմունքներ։ Մանկական գրականութիւն։ Մանկական սպիտակեղէնների կարելը։ Կուրսերում կան և հայերէն ու վրացերէն լեզուով բաժանմունքներ։ Մտադրութիւն կայ հրաւիրել հետևեալ դասախօսներին. Գ. Գ. Ալիբէկեան, դոքտոր Վ. Արծրունի, Ս. Վ. Արղութեան-Երկայնաբազուկ, Գ. Ն. Գեխտման, Ն. Ն. Ելչանինով, Պ. Կորոչաշվիլի, Ց. Մանանդեան, բժիշկ Ալխասխեան։ Ունկնդիրների ընդունելութիւնը հոկտեմբերի 15-ից։ Պարապմունքները կը սկսվեն Նոյեմբերի 15 ից։ Առաջին ուսումնական տարում դասընթացը 7 ամսվայ է։ Բոլոր դասախօսութիւնների վճարը 40 րուբլի է։ Վճարվում է կիսամեակներով։ Վարժուհիներին վճարելու դիւրութիւններ կը տրվեն։ (25, 30) 1—5

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Երկու սեռի անձանց համար

(Баку, Прачешная, домъ Теръ-Ованесова)

Կուրսերի նպատակն է տալ ուսանողներին մասնագիտական, եւ առեւտրական կրթութիւն եւ պատրաստել հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։

Կուրսերում աւանդվում են՝ 1) Առևտրական Թուաբանութիւն և Թուաբանութիւն համրիչի վրա. 2) Հաշուապահութիւն արդիւնաբերական, գործարանական, առևտրական և բանկային. 3) Առևտրական Թղթակցութիւն. 4) Առևտրական տնտեսագիտութիւն. 5) Առևտրական և մուրհակային օրէնքներ. 6) Գեղագրութիւն և արագագրութիւն (ուղղումն ձեռագրի). 7) Ուսուցումն գրող մեքենայի վրա։ Ուսումն սկսվելու է սեպտեմբերի 20-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից՝ ամենայն օր կուրսերում առաւօտեան ժամը 9-ից մինչև 12-ը և երեկոյեան 4-ից մինչև 7 ժամը։

Կուրսերի կանոնադրութիւնը (уставъ) և մանրամասն ծրագիրը (программа)—տրվում և ուղարկվում են ձրիաբար։ Օտարաքաղաքացիները դիմում են Баку, учредителю коммерческихъ курсовъ А.И. Теръ-Каспарову.
(Հ. Կ.) 29—30

Տպարան «ՀԵՐՄԷՍ» ընկ.
Электропечатная типографскаго Т—ва «Гермесъ». Мад. ул. № 15.